

Արտաշես Քալանթարյան

ԿԻՍԱԲԱՑ ԴՌԱՆ ԱՌԱՋ

(Միրիթ մերձավորիդ)

ԳՈՐԾՈՂ ԱՆՁԻՔ

ՎԻՐԱԲ – Ուսանող, ապա աղբահավաք մեքենայի վարորդ

ՄԱՐԳՈ – Նրա կինը

ՍՈՒՄԱՆ – Նրանց դուստրը

ԹՈՌՉՅԱՆ – Ավտոտեխնիկումի դիրեկտոր

ՆՇԱՆՅԱՆ – Մաքրման գրասենյակի պետ

ԱԼԼԱ – Արհմիութենական աշխատող

ՎԱՀԱԳՆ – Կոնցերտմեյստեր

ԿԱՐԵՆ – Երաժշտական դպրոցի դիրեկտոր

ԽՈՍՐՈՎ – Ուսանող

ՄԱՐԻՆԵ – Դեղատան աշխատող

ԿԱՌԼՈՍ – Պահեստապետ

ԱԲՐԱՀԱՄ – Դերձակ

ՊԱՐՍԱՄՅԱՆ – Ակադեմիկոս

(Հայկական էստրադային մեղմ երաժշտություն: Ոտնաձայներ:)

ՎԻՐԱԲ – Լավ օր էր: Ի՛նչ լավ օր էր: Այշելու մարդ է այդ ակադեմիկոս Պարսամյանը...
Ինչեր էր ասում... Հարբել եմ ոչ թե մի քանի բաժակից, այլ նրա իմաստուն խոսքերից...
(փականքի չխկոց) Սուս, կամաց բաց դուռը, Վիրաբ... չարթնացնենք մեր
տնեցիներին... Վա՛յ, Մարգոն ու Սուսանը դեռ քնած չե՛ն...

ՍՈՒՍԱՆ – Որ իմանա՛ չի ուզի, չի ուզի, էլի, մամ: Որ իմանա՛ չի ուզի:

ՄԱՐԳՈ - Ի՞նչ գիտես, Սուսան ջան:

ՍՈՒՍԱՆ – Գիտեմ, էլի: Որ իմանա հայրս աղբ հավաքող է, չի ուզի: Նրա հայրը գիտե՞ս ով է:
Աղբ հավաքողից ո՞վ աղջիկ կուզի, ա՛յ մամ:

ՄԱՐԳՈ - Իսկ դու ինչո՞ւ ես ասում, թե աղբ հավաքող է: Ասա, վարորդ է:

ՍՈՒՍԱՆ – Զի՞ հարցնի, թե ինչ վարորդ է: Ասում ես, էլի, մամ, ավտոբո՞ւս է քշում, թե տաքսի:
Ի՞նչ ասեմ: Էս ի՞նչ դժբախտություն է, մամ ջան, ի՞նչ դժբախտություն: Ի՞նչ անեմ, ի՞նչ
անեմ ես...

ՎԻՐԱԲ - Էս ինչե՞ր է ասում, գժվե՞լ է, ինչ է...

ՄԱՐԳՈ - Դե լավ, լավ, աղջիկ ջան, հանգստացիր: Եթե այդ տղան քեզ իսկապես սիրում է...

ՍՈՒՍԱՆ - *(Լաց լինելով)* Սիրում է, իհարկե, սիրում է, բայց չի ուզի, գիտեմ, էլի, չի ուզի, մամ
ջան: Ախր դու ինչի՞ էիր թողնում, որ հայրիկը աղբ հավաքող դառնա, ուրիշ գործ
չկա՞ր, ինչ է: Ամոթից գետինն եմ մտնում...

ՄԱՐԳՈ - Ի՞նչ ասեմ... Բա է՞ս ինչ ասեմ, որ ամբողջ կյանքում եմ ամաչել, երբ հարցրել են, թե
որտեղ է աշխատում: Այնքան սուտ եմ ասել, որ մի տոկոսն էլ բավական է դժոխքի
կրակի մեջ խորովվելու համար: Բայց ի՞նչ կարող ենք անել, աղջիկ ջան: Մեր
ճակատին էլ դա է գրված: Ի՞նչ կարող ենք անել:

ՎԻՐԱԲ – Խելագարվել կարելի է: Ի՞նչ անեմ, ներս մտնեմ, թե փողոց դուրս գամ ու կորչեմ:
(Փականքի չխկոց: Ոտնաձայններ) Բայց ո՞ւր գնամ, ոտքերս էլ չեն շարժվում: Ո՞ւր
գնամ: Նստիր, վեր ընկիր փողոցի այս նստարանին ու գլուխդ բռնիր, Վիրաբ... Էս ի՞նչ
էին ասում: Էն ի՞նչ էր ասում Մարգոն: Ուրեմն սուտ ու անպտո՞ղ է եղել իմ ապրած
ամբողջ կյանքը:

ԱՆՑՄԱՆ ԵՐԱԺՇՏՈՒԹՅՈՒՆ

(Աղջկա լացի ձայն)

ՎԻՐԱԲ – Աղջի՞: Աղջի, ինչի՞ ես լաց լինում:

ՄԱՐԳՈ - *(Վախիկցած)* Չմոտենաս, կկծեմ: Կկծեմ, մորս արև:

ՎԻՐԱԲ - Վա՛յ, դու հո վայրենի՞ չես: Ինչի՞ ես ուզում կծել:

ՄԱՐԳՈ - Բա դո՞ւ ինչ ես ուզում ինձանից: Դո՞ւք ինչ եք ուզում ինձանից, խուժաններ: Ես ձեզ ի՞նչ եմ արել: Մեղք եմ, էլի: Ասում եք, արի սիրեմ ու ցավեցնում եք: Տես, դե տես, տես... Վա իս, իմ շորը: Ախր մերս որ իմանա՝ կսպանի: Շո՞րս ինչի եք ճղում: Ախր շո՞րս ինչի եք ճղում: Դո՞ւք եք առել, որ ճղում եք...

ՎԻՐԱԲ - Անունդ ի՞նչ է:

ՄԱՐԳՈ - Մարգո:

ՎԻՐԱԲ - Էդ ո՞վ է... ցավեցրել քեզ:

ՄԱՐԳՈ - Դու, ո՞վ:

ՎԻՐԱԲ - Ե՞ս:

ՄԱՐԳՈ - Դու ու քո նմանները:

ՎԻՐԱԲ - Աղջի, դու հո գի՞ ժ չես: Ես քեզ առաջին անգամ եմ տեսնում: Ինձ նայիր, մի լավ ինձ նայիր, ես քեզ ձե՞ռք եմ տվել: Նայիր, նայիր:

ՄԱՐԳՈ - Ի՞նչ նայեմ: Բոլորդ էլ իրար նման մրոտ խուժաններ եք:

ՎԻՐԱԲ - *(Օրծադեղով)* Իսկ դո՞ւ ինչ գործ ունես էդ մրոտ խուժանների հետ:

ՄԱՐԳՈ - Ես էստեղ եմ ապրում:

ՎԻՐԱԲ - Ավտոտեխնիկումի հանրակացարանո՞ւմ:

ՄԱՐԳՈ - Հա: Մամաս հավաքարար է: Մեզ տուն են տվել պաղվալում: Բա դո՞ւ ով ես, որ մեզ չես ճանաչում:

ՎԻՐԱԲ - Նոր եմ ընդունվել: Սպեցռուից: Հատուկ արհեստագործական ուսումնարանից: Լսած կա՞ս:

ՄԱՐԳՈ - Չէ:

ՎԻՐԱԲ - Մարգո: Ես տղաներին կասեմ, որ քեզ էլ ձեռք չտան:

ՄԱՐԳՈ - Քեզ ո՞վ կլսի:

ՎԻՐԱԲ – Կլսեն: Ու քեզ որ տեսնեն՝ կանհետանան: Կասկած չունենա: Իսկ հիմա գնանք մեր սենյակը, ես թել ու ասեղ ունեմ, տեղն ու տեղը կկարեմ շորդ: Չի էլ երևա:

ՄԱՐԳՈ – Բա չէ: Որ հիմա էլ դու կամթես, հա՞: Ձեզ լավ գիտեմ:

ՎԻՐԱԲ – Իսկ որ թել ու ասեղ բերեմ, դու կկարողանա՞ս կարել:

ՄԱՐԳՈ – Բեր: *(Թնկթնկում է)* Վա՛խ, մերս որ իմանա, կսպանի: Տես, ոնց են պատռել մրոտ խուժանները: Վախ, ինչ լավ է, որ չի տեսնում մերս:

ՎԻՐԱԲ – Ո՞նց թե չի տեսնում:

ՄԱՐԳՈ – Հիվանդացել է: Սպիտակել են աչքերը:

ՎԻՐԱԲ – Բա... բա ո՞նց է աշխատում:

ՄԱՐԳՈ – Տասը տարի է ավլում ու լվանում է նույն տեղերը: Սովորել է իմ խեղճ մերը: Ամեն ինչ անգիր գիտի: Հետո արդեն մի տարի է, չեմ թողնում չարչարվի: Ես եմ նրա գործն անում: Ես աշխատանքային գրքույկ ունեմ: Համ սովորում եմ, համ աշխատում: Մենակ թե չխանգարեն մրոտ խուժանները: Չեն թողնում աշխատեմ: Բռնում քաշքշում, չարչարում են:

ՎԻՐԱԲ – Քեզ ասում եմ, որ էլ չեն անի: Հեր չունե՞ս, Մարգո:

ՄԱՐԳՈ – Չէ:

ՎԻՐԱԲ – Ես էլ չունեմ: Ոչ հեր եմ տեսել, ոչ մեր:

ՄԱՐԳՈ – Խեղճ տղա:

ՎԻՐԱԲ – Չէ, հա: Հեչ պետքս չի:

ՄԱՐԳՈ – Անունդ ի՞նչ է:

ՎԻՐԱԲ – Վիրաբ: Լավ է, գոնե, որ Հաղթանակ չեն դրել: Գիտե՞ս ինչի: Ախր մանկատան հաշվումներով ծնվել եմ հաղթանակի օրը, 1945 թվի մայիսի 9-ին: Ծիծաղելի է, չէ՞, հաղթանակն ու ես:

ՄԱՐԳՈ – Ես քեզ նման տղա չեի տեսել: Ինչ լավ է, որ դու կաս, Վիրաբ:

ՎԻՐԱԲ – Ինչի՞, ես ի՞նչ արեցի որ...

ՄԱՐԳՈ – Դու ուրիշ տեսակ տղա ես: Դու խիղճ ունես:

ՎԻՐԱԲ – Հագնվիր, այ աղջի, կմրսես:

ՄԱՐԳՈ – Դե շրջվիր:

ՎԻՐԱԲ – Ի՞նչ:

ՄԱՐԳՈ – Շուռ արի, որ հագնվեմ:

ՎԻՐԱԲ - *(Օրծաղելով)* Այ աղջի, մի ժամ է տկլոր նստած ես դիմացս: Ամաչելդ նո՞ր հիշեցիր:
Ի՞նչ է պատահել:

ՄԱՐԳՈ – Չգիտեմ: Շատ եմ խնդրում, շուռ տուր գլուխդ, հա՞...

(Անցումային երաժշտություն)

ՎԻՐԱԲ – Բարև ձեզ, ընկեր Թոռյան... Կանչե՞լ եք ինձ:

ԹՈՌՉՅԱՆ – Բարև: Մոտիկ արի: Հասե՞լ է:

ՎԻՐԱԲ – Ի՞նչը:

ԹՈՌՉՅԱՆ – Ծիրանը:

ՎԻՐԱԲ – Ի՞նչ ծիրան:

ԹՈՌՉՅԱՆ – Ընդհանրապես, ընդհանրապես ծիրանը:

ՎԻՐԱԲ – Ի՞նչ իմանամ:

ԹՈՌՉՅԱՆ – Ի՞նչ իմանամ... Ի՞նչ պիտի իմանաս: Թողնո՞ւմ եք հասնի, որ իմանաք: Տոգու-
ցոգու ուտում եք:

ՎԻՐԱԲ – Որ հասնի, էլ մեզ կհասնի՞:

ԹՈՌՉՅԱՆ - *(Օրծաղում է)* Ի՞նչ, ի՞նչ, որ հասնի էլ ձեզ կհասնի՞: Հիանալի բառախաղ է: Չի
հասնի, ճիշտ ես, տղաս, հաստատ չի հասնի: Լավ եք անում, որ թոցնում եք: Համն ու
հոտը դրա մեջ է: Շուկայից առածը չի ուտվում, ազնիվ խոսք: Ես էլ որ ձեր տարիքին
լինեի, Զանգվի ձորից դուրս չէի գա: Որ փոքր էի ու ամառները գյուղ էի գնում, մեր
գյուղացիները այգուց-այգի ձեն էին տալիս. «Էհե՛յ, զգուշ մնացեք, Թոռչիենց Արգամը
եկել է...»:

Դու ինձ սխալ չհասկանաս, Վիրաբ: Ես գողությանն ընդհանրապես դեմ եմ: Ես ատում եմ
գողությունը: Բայց երբ փոքրիկ տղան այգուց մի գրպան միրգ է թոցնում, ես դա
գողություն չեմ համարում:

ՎԻՐԱԲ - *(Օրծադրում է)* Ես էլ...

ԹՈՌՉՅԱՆ – Դե ասա, տեսնեմ, այնպիսի այգի կա՞, որ հնարավոր չլինի մտնել: Ասա:

ՎԻՐԱԲ – Ես ի՞նչ իմանամ:

ԹՈՌՉՅԱՆ – Չէ, չէ, ասա, կա՞ թե չէ:

ՎԻՐԱԲ – Չէ:

ԹՈՌՉՅԱՆ – Իսկ եթե պարիսպը բարձր է, փշալարով պատած ու վրան էլ կոտրատված ապակիներ են շարել, ո՞նց կմտնես:

ՎԻՐԱԲ – Պարիսպի հետ ի՞նչ գործ ունեմ: Առվի հունով կմտնեմ:

ԹՈՌՉՅԱՆ – Ճիշտ է, ճիշտ է, միակ մուտքն է, որ փակել հնարավոր չէ: Ապրես: Ու հերն էլ անիծած, չէ՞, որ շորերդ կթրջվեն ու կպատառոտվեն, որ կոշիկներդ կցեխոտվեն ու կծոմովեն, որ տանը հայրդ կամ մայրդ մի լավ ջարդդ կտան...

ՎԻՐԱԲ – Ինձ ոչ մի հարազատ կյանքում չի ծեծել:

ԹՈՌՉՅԱՆ – Ճի՞շտ... Ախ, հա՛... *(Դարակի չխկոց)* Իսկ այս դանակի համար հաստատ արժեր ծեծել քեզ, Վիրաբ, ափսոս, շատ ափսոս, որ ծեծող չես ունեցել, տղաս:

ՎԻՐԱԲ – Իմը չէ:

ԹՈՌՉՅԱՆ – Քոնն է, ու հենց դրանով էլ սպառնացել ես ձեր սենյակի տղաներին:

ՎԻՐԱԲ – Իմը չէ:

ԹՈՌՉՅԱՆ – Քոնն է: Եվ ես միայն մի բանի համար եմ ուրախ, որ չի գործածվել: Իսկ հիմա գնա: Ու հիշիր, մարդը դանակը ստեղծել ու մարդու դեմ օգտագործել է այն ժամանակ, երբ լեզու չի ունեցել: Եվ մի կարգին ուղեղ էլ չի ունեցել: Իսկ հիմա գնա, տղաս...

(Անցման երաժշտություն)

ՄԱՐԳՈ – Բարև, Վիրաբ:

ՎԻՐԱԲ - *(Փոթկում է)* Բարև:

ՄԱՐԳՈ – Ինչի՞ ես ծիծաղում:

ՎԻՐԱԲ – Այ աղջի, բերանիդ ներկ ես քսե՞լ:

ՄԱՐԳՈ – Ո՞վ:

ՎԻՐԱԲ – Դու, ո՞վ:

ՄԱՐԳՈ – Ե՞ս, ի՞նչ ներկ:

ՎԻՐԱԲ – Հրեղ, կրասկա ես քսել, էլի: Էս ի՞նչ է, ներկ չի՞:

ՄԱՐԳՈ – Ներկ է՞, ներկ է՞, ներկ է՞... Դե մատդ քսիր ու տես՝ նե՞րկ է...

ՎԻՐԱԲ – Բա ինչի՞ է եղքան կարմիր: Ոնց որ պոմիդոր լինի:

ՄԱՐԳՈ – Երևի հասել է:

ՎԻՐԱԲ – Մարգո, հը՞, էդ մրոտ խուժանները էլ քեզ չե՞ն մոտենում:

ՄԱՐԳՈ – Չէ: Բայց ի՞նչ օգուտ:

ՎԻՐԱԲ – Օգո՞ւտ: Իսկ ի՞նչ օգուտ էիր ուզում:

ՄԱՐԳՈ – Նրանք չեն մոտենում: Բայց ի՞նչ օգուտ, որ դու էլ չես մոտենում: Ոնց որ ես չկամ, գոյություն չունեմ: Կողքովս անցնում ես, ոնց որ պատի մոտով անցնես:

ՎԻՐԱԲ – Սպասիր, սպասիր, ես քեզ չե՞մ բարևում, Մարգո:

ՄԱՐԳՈ – Ավելի լավ է, չբարևեիր: Որ չբարևեիր, կմտածեի թե չես տեսել: Քո արևով դա էլ բարև է, հա՞ :

ՎԻՐԱԲ – Լսիր, դու ինձանից ի՞նչ ես ուզում: Ես քեզ պա՞րտք եմ:

ՄԱՐԳՈ – Պարտք ես, բա ինչ ես: Բա մի անգամ պաշտպանում են ու մի կողմ քաշվո՞ւմ:
Տիրություն ես անում, մինչև վերջ տիրություն արա: Ոչ թե խայտառակիր աշխարհով մեկ:

ՎԻՐԱԲ – Ե՞ս եմ քեզ խայտառակում:

ՄԱՐԳՈ – Դու, բա ո՞վ: Էն մրոտ լակոտներից ով տեսնում է, ընկերոջը բարձր-բարձր ասում է՝ դրա հետ գործ չունես: Դա Վիրաբինն է: Իսկ Վիրաբի համար ես եղած կամ չեղած, մի հաշիվ է: Ասա՝ չէ, սուտ է... Դե, ասա, է... Չայն չես հանում, չէ՞: Հիմա ուզո՞ւմ ես ես ասեմ: Դու ինձ չես մոտենում, որովհետև վախենում ես:

ՎԻՐԱԲ – Ե՞ս:

ՄԱՐԳՈ – Հա, հա, դու, դու, վախենում ես: Դու վախկոտ ես: Դու ավելի վատն ես, քան էն մրոտ խուժանները, հա, հա, որովհետև, որովհետև նրանք քեզ նման ձևեր չեն բանեցնում: Ինչ ուզում են, ասում են՝ առանց ամաչելու, տղամարդու նման: Իսկ դու... Մի խփի, մի խփի, ցավդ տանեմ: Ինչի՞ ես ուզում խփել: Առանց էդ էլ ինձ շատ են խփել: Մի խփի, Վիրաբ ջան, ցավում է:

ՎԻՐԱԲ – Քեզ ո՞վ է խփում, այ աղջի, դու հո փորձանք չես:

ՄԱՐԳՈ – Ուրեմն չէի՞ր ուզում խփել: Ուրեմն ինձ վրա չե՞ս ջղայնանում, Վիրաբ ջան: Ախր ինչի՞ ես ինձանից փախչում: Ախր ինչ որ ուզես՝ ես կանեմ քեզ համար: Ինչ ուզես: Ուզում ես՝ համբուրի ինձ, հա՞, ուզո՞ւմ ես, համբուրի...

ՎԻՐԱԲ – Չի լինի, Մարգո: Մի նեղանա, բայց դու իմ ուզած աղջիկը չես:

ՎԻՐԱԲ – Ինչի՞, ինչի՞, Վիրաբ ջան:

ՎԻՐԱԲ – Որովհետև ... որովհետև ես կուզենայի, որ իմ սիրած աղջիկը էդ հարցը չտար: Որ իմ սիրած աղջիկը աշխարհի ամենահպարտ ու ամենահամեստ աղջիկը լիներ: Որ նրա մարմնի վրա կապույտ տեղեր չլինեին, Մարգո...

ՄԱՐԳՈ – Ուրեմն, ես եմ մեղավոր, հա՞:

ՎԻՐԱԲ – Հա: Դու քեզ էնպես պիտի պահես, որ ոչ ոք չմոտենա, հասկանո՞ւմ ես: Որ ոչ ոք չհամարձակվի մոտիկ գալ քեզ:

ՄԱՐԳՈ – Որ շան երես ունեն, ես ինչ անեմ:

ՎԻՐԱԲ – Դու էլ գայլի երես պիտի ունենաս:

ՄԱՐԳՈ – Հենա դու ունես, էլի, հերիք չի՞:

ՎԻՐԱԲ - *(Օրծաղելով)* Ինձ հերիք է: Ու դու մի նեղանա, Մարգո ջան: Եթե պետք լինի, իմաց տուր: Ես քեզ միշտ, ամեն տեղ կպաշտպանեմ: Բայց դու ինձանից ուրիշ բան մի սպասիր, հա՞: Ես էդպես էլ ասել եմ տղերքին: Ասել եմ, որ նա իմ քույրն է: Կուզե՞ս սրանից հետո քո եղբայրը լինեմ: Մինչև կյանքիս վերջը:

ՄԱՐԳՈ – Պահ, շատ պետքս է քեզ նման ախպերը: Ֆեզեղի որբ-անտեր...

(Անցումային երաժշտություն)

ԹՈՌՉՅԱՆ – Ի՞նչ ես որոշել: Ամռան արձակուրդներին ի՞նչ ես անելու, Վիրաբ:

ՎԻՐԱԲ – Ի՞նչ իմանամ, ընկեր Թոռչյան:

ԹՈՌՉՅԱՆ – Տեղ ունե՞ս գնալու:

ՎԻՐԱԲ – Ե՞ս... Ո՞ւր պիտի գնամ:

ԹՈՌՉՅԱՆ – Ուրեմն ոչ մի տեղ չունե՞ս գնալու:

ՎԻՐԱԲ – Չէ:

ԹՈՌՉՅԱՆ – Կուզե՞ս խոսեմ, քեզ ճամբար ուղարկեն:

ՎԻՐԱԲ – Չէ... Ամբողջ կյանքում շարք եմ կանգնել: Հերիք է: Չզվե՞լ եմ:

ԹՈՌՉՅԱՆ – *(Հեզմանքով)* Ամբողջ կյանքում... Էդ ի՞նչ կյանք ես անցել: Քո ամբողջ կյանքը դեռ դիմացդ է: Ես քո գլխին քարոզ չեմ կարդում: Գիտեմ, որ երբ մենք ճառ ենք ասում, դուք ձեր լսողությունն անջատում եք: Նայում եք մեր աչքերին, տմբամբացնում եք գլուխներդ՝ իբրև լիակատար համաձայնության նշան ու անջատվում եք: Գիտեմ: Դրա համար էլ քարոզ չեմ կարդա: Արհեստագործական ուսումնարանի ո՞ր խումբն ես ավարտել:

ՎԻՐԱԲ – Խառատների: Հետո էլ՝ մեխանիկների:

ԹՈՌՉՅԱՆ – Ի՞նչ կարգ ունես:

ՎԻՐԱԲ – Չորրորդ:

ԹՈՌՉՅԱՆ – Եվ այդ մակարդակին ես հասել դանակնե՞ր տաշելու համար: Ես քեզ տղամարդուն արժանի գործ եմ առաջարկում: Ավելի ճիշտ՝ երկու գործ միանգամից: Մենք խառատային մի փոքր հաստոց ունենք ներքնահարկում: Որպեսզի ամռանը պարապ-սարապ ման չգաս, աշխատեցրու հաստոցը: Ինչ մասեր ուզես, կտանք: Եվ երկրորդը՝ ցանկապատի մոտի ավտոները տեսե՞լ ես:

ՎԻՐԱԲ – Էն իսկամները՞...

ԹՈՌՉՅԱՆ – Հա: Թե կարող ես՝ այդ երեք ավտոմեքենաներից մի կարգին ավտո հավաքիր: Դուրս գրված են, բայց ափսոս գալիս են դեն գցել: Ինչո՞ւ ես ժպտում: Ուզում ես ասել, թե մեռելներին ինչքան էլ գումարես իրար, մի ողջ մարդ դուրս չի՞ գա:

ՎԻՐԱԲ – *(Օրծաղում է)* Հա...

ԹՈՌՉՅԱՆ – Ո՞վ իմանա: Դու փորձիր: Կորցնելու ի՞նչ ունենք: Ես դա կհամարեմ քո ավարտական քննությունը: Իսկ դրանից բացի... դրանից բացի երեք ամիս քեզ կվճարեմ լրիվ աշխատավարձ՝ իբրև չորրորդ կարգի մեխանիկի: Հասկացա՞ր: Քո թոշակից բացի, ամեն ամիս կստանաս ևս հարյուր ռուբլի: Հը՞ : Չե՞ս ուրախանում:

ՎԻՐԱԲ – Ինչի՞ն է պետք, ընկեր Թոռյան:

ԹՈՌՉՅԱՆ – Ի՞նչը:

ՎԻՐԱԲ – Փողը:

ԹՈՌՉՅԱՆ – Փողը՞:

ՎԻՐԱԲ – Փողն իմ ինչի՞ն է պետք, ընկեր Թոռյան: Մեր չունեմ, որ էդ փողով պահեմ: Քույր չունեմ, որ շոր առնեմ նրա համար: Ախպեր չունեմ, որ կոնֆետներ լցնեմ գրպանները: Ու իսկի տեղ էլ չունեմ, որ էդ փողը պահեմ: Փողն իմ ինչի՞ն է պետք:

ԹՈՌՉՅԱՆ – Եվ ուրեմն այս արար աշխարհում չկա՞ մեկը, որին դու ուզենաս օգնել, լավություն անել:

ՎԻՐԱԲ – Չէ:

ԹՈՌՉՅԱՆ – Ու ոչ մեկը չկա՞, որ քո կարիքն ունենա:

ՎԻՐԱԲ – Չէ:

ԹՈՌՉՅԱՆ – Ուրեմն ես քեզ փող չեմ տա: Որովհետև այն փողը, որ մարդուն պետք չէ, միայն դժբախտություն կրերի նրան: Ես քո աշխատավարձը կհավաքեմ, քո անունով կգցեմ ինայդրամարկը ու կպահեմ այնքան, մինչև որ մի օր գաս ինձ մոտ ու ասես՝ ինձ փող է պետք, ընկեր Թոռյան, շատ եմ խնդրում, տուր ինձ իմ փողը:

ՎԻՐԱԲ - *(Օրծաղելով)* Չեմ գա...

ԹՈՌՉՅԱՆ – Կգաս... կգաս... Եվ երևի շատ շուտ կգաս: Իսկ երբ կին ու երեխաներ կունենաս, և այդ կինը ու երեխաներդ կսեղմեն կոկորդը... Դե ի՞նչ, շատ խոսեցինք, գործը հա՞նձն էս առնում, Վիրաբ:

ՎԻՐԱԲ – Կանեմ, ընկեր Թոռյան:

(Անցման երաժշտություն)

ՎԻՐԱԲ – Դե լավ, տուն գնա, Մարգո:

ՄԱՐԳՈ – Գնամ տուն ի՞նչ անեմ, Վիրաբ ջան: Ո՞վ ունեմ ինձ սպասող:

ՎԻՐԱԲ – Ուրեմն էստեղ էլ նստած պիտի մնա՞ս:

ՄԱՐԳՈ – Որ դու չլինեիր, ինչ կանեի ես:

ՎԻՐԱԲ – Որ ճիշտն ասեմ, սկզբում ես էլ ինձ լրիվ կորցրեցի: Ախր բուրբովին մտքիցս թռել էր, որ ես Թոռյանի մոտ երեք հարյուր ռուբլի ունեմ: Որ բժիշկը մորդ մասին հարցրեց անտե՞ր է, ջղայնությունից նոր միայն հիշեցի: Հիշեցի ու զարմացա, թե ինչքան իմաստուն է մեր դիրեկտորը, ինձ ո՞նց ասաց, թե կգաս և շատ շուտ կգաս...

ՄԱՐԳՈ – Դու չմտածես, Վիրաբ ջան: Կաշխատեմ կամաց-կամաց կտամ քո պարտքը:

ՎԻՐԱԲ – Հիմար բաներ ես խոսում: Փողն իմ ինչի՞ն է պետք:

ՄԱՐԳՈ – Ի՛նչ խոսքեր ասաց գերեզմանատանը ընկեր Թոռյանը... Ես ավելի շատ նրա խոսքերի վրա էի լաց լինում, Վիրաբ:

ՎԻՐԱԲ – Մարգո, դու տեսա՞ր թե ոնց ընկավ մայրիկդ...

ՄԱՐԳՈ – Չէ, բայց գիտեի...

ՎԻՐԱԲ – Ո՞նց թե: Ի՞նչ գիտեիր:

ՄԱՐԳՈ – Ինքն էր ասել:

ՎԻՐԱԲ – Ասել էր, որ իրեն պետք է ցած գցի երրորդ հարկից:

ՄԱՐԳՈ – Հա:

ՎԻՐԱԲ – Ինչի՞ համար: Կուրանալո՞ւ...

ՄԱՐԳՈ – Հա, չէր ուզում ապրել...

ՎԻՐԱԲ – Սպասիր, դու գիտեիր ու... մայրդ քեզ ասել էր ու... Ու դու հանգիստ սպասում էիր, թե ե՞րբ է ինքնասպան լինելու: Հանգիստն էլ չասեմ, դու սպասում էիր, թե երբ է ինքնասպան լինելո՞ւ: Էդ ի՞նչ ապուշ բան ես ասում, Մարգո:

(Մարգոն լաց է լինում)

Էդ ինչ ես ասում: Ուրեմն նա քեզ ասել էր ու դու չէի՞ր փորձում համոզել... չէի՞ր փորձում խանգարել:

ՄԱՐԳՈ – Ախր ով կհավատար...

ՎԻՐԱԲ – Դու նրա կողքից մի քայլ չպետք է հեռանայիր... Աստված քեզ մայր էր տվել ու դու... դու չպիտի թողնեիր, որ նա աշխատի ու էն էլ չտեսնող աչքերով ապակիներ լվանա: Դու պիտի... Էհ, թե ես ինչ եմ ավելորդ տեղը ուշացած խոսում:

ՄԱՐԳՈ – Վիրաբ ջան, դու ինձ սխալ հասկացար: Էդպես չի եղել, Վիրաբ ջան: Հինգ տարի շարունակ, այն օրվանից, երբ սկսեցին ցավել աչքերը, նույնն էր ասում: Ասում էր, որ կուրանամ, մի օր էլ չեմ ապրի, ինձ ցած կգցեն երրորդ հարկից: Ես ի՞նչ իմանայի... Մտածում էի, թե ցավ է, էլի, մտածում էի, թե խոսք է, էլի... Իսկ դու էնպիսի բաներ ես ասում... Բա... բա ես կուզենայի՞ մենակ մնալ արար աշխարհում: Բա ես կուզենայի՞ անտեր մնալ էս աշխարհում: Ախր ես իմ մորից բացի ոչ ոք չունեմ: Ոչ ոք: Ես ո՞նց եմ ապրելու սրանից հետո...

ՎԻՐԱԲ - *(Գրեթե ինքն իրեն)* Էլի ե՛ս... դարձյալ ե՛ս... ես, ես, ես...

ՄԱՐԳՈ – Ի՞նչ եմ անելու: Որ ինձ նեղացնեն՝ ո՞ւմ մոտ եմ լաց լինելու: Ավելի լավ չէ՞ր ինձ էլ քեզ հետ տանելի, մամա ջան, : Բռնելի թես ու նոր ընկնելի, մամա ջան: Բա մերն էլ իր երեխային աշխարհ կբերի ու կթողնի անտե՞ր...

ՎԻՐԱԲ – Վերցրու թաշկինակը... սրբիր երեսդ, ամբողջը ցեխ է, այ աղջի...

ՄԱՐԳՈ – Չէ, չէ, չեմ ուզում, կկեղտոտվի...

ՎԻՐԱԲ – Հիմար... անխելք աղջիկ ես, էլի... Սրբիր... *(մեկուսի)* Ինչքա՛ն նման ենք իրար: Ես ինչքան նման ենք իրար: Երկուսս էլ որք ենք ու անտեր: Մենք էլ ո՞ւմ ենք պետք աշխարհում: Մենակ իրար ենք պետք: Գոնե ես հո գիտեմ, որ նրան պետք եմ: Ոչ մեկին պետք չեմ ու մենակ նրան եմ պետք: Ախր ես որ ուզենամ, Մարգոն երջանիկ կլինի: Իսկ քի՞չ բան է, որ կյանքում գոնե մեկին տեր կանգնես, գոնե մեկին օգնես, որ երջանիկ լինի:

(Բարձր)

Մարգո, լսիր, թե ինչ եմ ասում: Տես, էս իրիկունն է, դու ես, ես եմ ու աշխարհում մենք էլ ոչ մի բան չունենք, բացի քո մոր գերեզմանից: Ես մորդ գերեզմանով երդվում եմ, որ էլ երբեք-երբեք, քանի կամ, քեզ մենակ չեմ թողնի: Լսո՞ւմ ես: Աշխարհի ինատու, ես ամեն ինչ կանեմ, որ դու բախտավոր լինես: Շան պես կչարչարվեմ, կտանջվեմ, որ իսկի հնար չունենամ, կգնամ համբալ կաշխատեմ, կգնամ աղբ կթափեմ ու կպահեմ քեզ: Կպահեմ թագուհու նման, հավատա, դու ոչ մի բանի պակասություն չես ունենա: Ոչ մի բանի: Աշխարհի ամենասիրուն շորերը կառնեմ քեզ համար ու ամենափայլուն կոշիկները ու կթողնեմ ամեն օր վարսավիրանոց գնաս, որ ուրիշները սանրեն էդ զգզված մազերդ, Մարգո ջան:

(Մարգոն հեկեկում է)

ՄԱՐԳՈ – Վիրաբ ջան... Վիրաբ ջան...

(Անցումային երաժշտություն)

ԹՈՌՉՅԱՆ – Ես քեզանից շատ գոհ եմ, Վիրաբ: Եվ որպեսզի իմանաս, թե որքան եմ գոհ, առաջարկում եմ մնալ տեխնիկումում: Կղեկավարես արհեստանոցը և գործնական պարապմունքներ կանցկացնես ուսանողների հետ, կսովորեցնես ավտո վարել: Հը՞, ուրախությունից կծեցի՞ր լեզուդ: Հին խոսք է, ասում է՝ մեծ է որբի աստվածը:

ՎԻՐԱԲ – Որբի դիրեկտորն է մեծ, ընկեր Թոռչյան: Շատ եմ խնդրում աներես տղա չհամարեք, բայց ինձ բնակարան է պետք: Բնակարան կարո՞ղ եք տալ:

ԹՈՌՉՅԱՆ – Բնակարան՞: Որտեղի՞ց, տղաս, քսան տարվա դիմումներ ունենք:

ՎԻՐԱԲ – Ինձ տուն է պետք: Ի՞նչ անեմ...

ԹՈՌՉՅԱՆ – Ի՞նչ զարմանալի սերունդ եք, այ մարդ: Ամեն ինչ ուզում եք միանգամից ունենալ, պատրաստի: Այդպես ո՞նց կլինի: Ես... ես ինստիտուտ եմ ավարտել, տասը տարի դիրեկտոր եմ այս տեխնիկումում, տասը տարի էլ գյուղական դպրոցներում եմ աշխատել ու միայն անցյալ տարի են ինձ բնակարան տվել: Այն էլ ինչ բնակարան: Միայն պատերը: Վերանորոգումը դեռ չեմ վերջացրել: Իսկ դու... իսկ դուք... Քեզ հիանալի աշխատանք եմ առաջարկում: Հնարավորություն կունենաս թե՛ աշխատելու, թե՛ հեռակայելու ինստիտուտում... Ես քեզ ապագա եմ առաջարկում, իսկ դու...

ՎԻՐԱԲ – Ինձ տուն է պետք, ընկեր Թոռչյան: Ես մենակ չեմ...

ԹՈՌՉՅԱՆ – Դե ուրեմն էլ ի՞նչ ես ուզում ինձանից: Գնա, իրենք են խնդրում: Տեսնո՞ւմ ես այս թուղթը... Գնա շրջսովետի գործկումի սանսեկտոր, այսինքն՝ մաքրման գրասենյակ ու աշխատիր: Գնա...

ՎԻՐԱԲ – Տուն կտա՞ն:

ԹՈՌՉՅԱՆ – Անմիջապես: Եվ աշխատավարձն էլ շատ բարձր է: Բայց զիտե՞ս ինչ ես անելու, ընկեր Վիրաբ: Աղբ ես հավաքելու, հասկացա՞ր, աղբ:

ՎԻՐԱԲ – Հա, եթե տուն են տալիս, կգնամ...

ԹՈՌՉՅԱՆ – Լո՞ւրջ ես ասում, լավ մտածիր, տղաս: Ես քեզ անկեղծ եմ ասում: Դու տաղանդավոր մարդ ես: Դու ամեն ինչ կարող ես դառնալ, որովհետև քո մեջ ամեն լավ բանի սկիզբը կա: Հասկացա՞ր: Քեզ մնում է միայն քո սրտի սիրած գործը գտնել, որ հետո չափսոսաս...

Լավ, եթե դասատու չես ուզում դառնալ կամ ինժեներ, գոնե մաքուր, ջահելին վայել գործ ընտրիր: Կուզե՞ս խոսեմ գնա տաքսապարկում աշխատի, կամ գոնե ավտոբուսի վրա: Չե՞՛: չե՞՛, ուրեմն ուզում ես աղբ հավաքել: Ախր դու չգիտես, թե դա ինչ գործ է, տղաս: Իսկ ես զիտեմ: Գնալու ես, խրվես ու մնաս այդ աղբի մեջ: Հավատա ինձ,

որովհետև տունն էս ստանալու, բարձր աշխատավարձ էս ստանալու և կարծելու էս, թե դրանից այն կողմ աշխարհի չկա: Հասկացա՞ր:

ՎԻՐԱԲ – Հա, կգնամ:

ԹՈՌՉՅԱՆ – Գիտես ինչ, Վիրաբ, իհարկե լավ ու վատ աշխատանք չկա... Գլխով չանես, էս քեզ քարոզ չեմ կարդում: Բայց դու միանգամից մեծ բեռի տակ էս մտնում: Չես դիմանա, կկոտրվես, տղաս: Երբևէ տեսած կա՞ս, որ աղբահավաք մեքենայի վարորդը ջահել լինի: Չես էլ տեսնի, որովհետև ծանր գործ է ու ոչ մի հեռանկար չունի: Ուրեմն արժե՞ մի բնակարանի համար...

ՎԻՐԱԲ – Մեզ տուն է պետք, ընկեր Թորչյան...

(Անցումային երաժշտություն)

ՄԱՐԳՈ - *(Շշուկով)* Հետո, հետո՞, Վիրաբ:

ՎԻՐԱԲ – Այ աղջի, ամբողջ շենքում էս ու դու ենք, ի՞նչ էս փսփսալով խոսում:

ՄԱՐԳՈ – Վախենում եմ սատանաները լսեն: Թյու, թյու, թյու...

ՎԻՐԱԲ – Տո, գժի մեկը, պաչում էս, հետո թքում:

ՄԱՐԳՈ – Էդ սատանաներին էր ուղղված: Որ մեզ մոտիկ չգան, մեր պլանները չլսեն ու չխանգարեն: Ախր էս երջանիկ եմ, Վիրաբ: Հետո՞, հետո՞:

ՎԻՐԱԲ – Ասացի՞ կմտածեմ ու կասեմ վաղը:

ՄԱՐԳՈ – Ես քո ցավը տանեմ: Որ ասել էս մտածեմ, նշանակում է մտածենք, չէ՞:

ՎԻՐԱԲ – Բա ի՞նչ:

ՄԱՐԳՈ – Մտածենք: *(Համբույրի ձայն)* Մտածենք: Ի՞նչ աղի է:

ՎԻՐԱԲ – Ի՞նչն է աղի:

ՄԱՐԳՈ – Քրտինքդ:

ՎԻՐԱԲ – Աղի է, մի պաչի:

ՄԱՐԳՈ – Յա, աղի էլ լինի՞ կպաչեմ, կծու էլ լինի՞ կպաչեմ: Քե՞զ ինչ: Իմը չի՞: Իմը չի՞: Վախ, էս ինչ հոտ է գալիս քեզանից, շնչում եմ ու չեմ կշտանում: Մեռնեմ հոտիդ, Վիրաբ:

ՎԻՐԱԲ – Աղբի հոտն է:

ՄԱՐԳՈ – Թեկուզ աղբի հոտ լինի... Բայց որ քեզանից է գալիս, ուրեմն քո հոտն է, ա՛խ...

ՎԻՐԱԲ – Հանաք եմ անում, այ աղջի: Օրը երկու անգամ ցնցուղի տակ եմ մտնում: Կյանքումս իրար գումարած էսքան լողացած չկայի, ինչքան էս երեք ամսում:

ՄԱՐԳՈ – ՕՖ, շատ մի խոսի: Թող մի լավ շնչեմ: Ուխա՛յ: Դե, մտածենք:

ՎԻՐԱԲ – Մտածենք:

ՄԱՐԳՈ – Թող քո ուզածը լինի, վերցնենք պետական բնակարանը:

ՎԻՐԱԲ – Ինչի՞:

ՄԱՐԳՈ – Ասեմ: Նախ՝ հենց վաղն էլ կարող ենք տեղափոխվել: Ամեն ինչ պատրաստ է: Ջուրը մեջը, գազը՝ մեջը, լողասենյակը մեջը... Հա, դու ասացի՞ր, որ մենք աճող ընտանիք ենք:

ՎԻՐԱԲ – Ինչ ես խոսում, այ աղջի, ամոթ չի՞:

ՄԱՐԳՈ – Ո՞նց թե ամոթ է: Ուրեմն չենք աճելո՞ւ:

ՎԻՐԱԲ – Թյու: Էդ ինչ բառ է: Դա ասելու խո՞սք է: Առանց ասելու չե՞ն հասկանա:

ՄԱՐԳՈ – Եսիմ: Ո՞վ գիտի ինչ մտածեն:

ՎԻՐԱԲ – Մարգո, ավելի լավ չի՞ լինի, եթե հողամաս վերցնենք, տուն սարքենք մեր ձեռքով, մեր ուզածի պես, ծառեր տնկենք, փոքրիկ բանջարանոց գցենք, կանաչի ցանենք, պոմիդոր ու բադրիջան: Իրիկունը նստենք մեր պատշգամբում...

ՄԱՐԳՈ – Որ պետական բալկոնում նստես, չի՞ լինի:

ՎԻՐԱԲ – Ինչո՞ւ չի լինի: Բայց ասում են սեփականն ուրիշ է:

ՄԱՐԳՈ – Սեփականի հոգսն էլ ուրիշ է: Հարցրել եմ, գիտեմ: Ախր ինչ գործ ունենք, այ մարդ: Կարծում ես քի՞չ հոգս ենք ունենալու: Հետո՝ խոսք ես տվել, չէ՞, Վիրաբ ջան, որ դու աշխատելու ես, իսկ ես սովորելու եմ: Բա քեզ կսազի՞, որ քո կինն անգրագետ մնա: Հետո, որ ես ավարտեմ, կաշխատեմ, դու կսովորես, հա՞...

ՎԻՐԱԲ - *(Կոտրված)* Մտածենք:

ՄԱՐԳՈ – Հա, հա, մտածենք... Մենակ թե պետական շենքի մասին մտածենք, հա՞...

ՎԻՐԱԲ – Մարգո, տունը մի գլուխ պետք է ունենա: Եվ էդ գլուխը տղամարդը պետք է լինի: Ե՛ս:

ՄԱՐԳՈ – Վա՞յ, ի՞նչ պատահեց, այ մարդ:

ՎԻՐԱԲ – Էլ ի՞նչ պետք է պատահի: Քեզ ու քեզ հարցեր ես լուծում: Ասում ես մտածենք ու հետն էլ ստիպում ես, որ քո ուզածի պես մտածեմ:

ՄԱՐԳՈ – Բա չմտածե՞նք, Վիրաբ ջան: Ախր էդ տանն ավելի շատ ես եմ լինելու, ցավդ տանեմ: Դու առավոտ շուտ գնալու ես, գիշերը գաս: Ո՞վ է ավլելու, թափելու, լվացք անելու, ճաշ պատրաստելու: Ո՞վ է երեխայի համար շորեր կարելու, բարուրներ ու տակաշորեր լվանալու, փռելու, չորացնելու...

ՎԻՐԱԲ – Վրա տվեց: Ի՞նչ երեխա: Կիկոսի պատմությո՞ւնն ես սարքում:

ՄԱՐԳՈ – Թե անունն ինչ կդնես, քո գործն է: Տան գլխավորը դու ես, , դու էլ կորոշես: Բայց ես մեր երեխայի մասին եմ խոսում:

ՎԻՐԱԲ – Ի՞նչ...

ՄԱՐԳՈ – Մեր երեխայի:

ՎԻՐԱԲ – Մարգո՞... Մարգո, հո հանաք չես անում: Մարգո, էդ ի՞նչ ես ասում: Մարգո ջան, ճի՞շտ, ճի՞շտ, Մարգո ջան: Ախր եղպես ո՞նց կլինի: Ախր մենք ինքներս դեռ երեխաներ ենք: Մեզանից ի՞նչ երեխա...

ՄԱՐԳՈ – Իմ իսկառ... Հիմա ի՞նչ ես ասում, դու որոշի, ուզում ես պետական շենքում ապրենք, ուզում ես հողամաս վերցրու... Պետակա՞ն, Վիրաբ ջան...

ՎԻՐԱԲ - *(Օրծաղելով)* Հա, հա, հա՛...

(Անցումային երաժշտություն)

ՎԻՐԱԲ – Բարի լույս, ընկեր Նշանյան:

ՆՇԱՆՅԱՆ – Բարի լույս, Վիրաբ, ո՞նց ես...

ՎԻՐԱԲ – Էդ Սիմոնից ազատիր ինձ, ընկեր դիրեկտոր:

ՆՇԱՆՅԱՆ – Սիմոնն ո՞վ է...

ՎԻՐԱԲ – Ոչ բարով իմ բանվորը:

ՆՇԱՆՅԱՆ – Չի՞ աշխատում:

ՎԻՐԱԲ – Չի ուզում աշխատել, ընկեր Նշանյան: Մի տեղ կանգնում եմ, թե չէ, փոխանակ աղբը հավաքի, ավտոն լցնի, որևէ թերթ կամ ամսագիր է վերցնում ու սկսում է կարդալ:

(Նշանյանը ծիծաղում է) Կծիծաղեք, իհարկե: Հումորից լրիվ բոբիկ է: «Ոգնին» կարդում է ու ինձ ասում՝ տես, տես, Վիրաբ, մերոնք մի ժամացույց են հնարել, որն երկու անգամ ավելի արագ է աշխատում, քան թե ճապոնական ժամացույցները: Ի՞նչ կլինե՞ր՝ մի քիչ էլ դու արագ աշխատեիր, Սիմոն, ասում եմ: Բայց իսկի պետքն էլ չի:

«Չէ, չէ, տես ինչ է գրված: Ուրեմն մեր հայ գիտնականները աշխարհում առաջին տեղն են գրավում»: Որտեղի՞ց հնարեցիր, ասում եմ: «Հրես, գրված է էստեղ, ասում է. ըհը. նշանավոր անասնագետ Վարդան Վարդանյանը կովերի գլխաքանակն ավելացնելու նպատակով ստեղծել է յոթգլխանի կովեր»:

ՆՇԱՆՅԱՆ – Վա՛յ, մեռնես դու, Սիմոն:

ՎԻՐԱԲ – Ասում եմ, ա՛յ տղա, դա հումոր է, սուտ է: Ասում է՝ ինչի՞ է սուտ, հրես գրված է, աչքերի՞ս հավատամ, թե քեզ: Մեր թերթերը սուտ բա՞ն կգրեն:

ՆՇԱՆՅԱՆ - *(Ծիծաղելով)* Հիմա ի՞նչ ես ասում:

ՎԻՐԱԲ – Ասում եմ՝ քանի որ Սիմոնի տեղն էլ ես եմ աշխատում, ի՞նչ կլինի նրա աշխատավարձի կեսը տաք ինձ ու էլ բանվոր չտաք:

ՆՇԱՆՅԱՆ – Վիրաբ, ճիշտն ասած, ես քո աշխատանքից այնքան գոհ եմ, որ ինչ ասես կանեմ քեզ համար: Ձերոնցից մեկն ու մեկին բեր, ձևակերպեմ ու բանվորի աշխատավարձը լրիվ դու ստացիր:

ՎԻՐԱԲ – Ո՞ւմ:

ՆՇԱՆՅԱՆ – Ում ուզում ես՝ հորդ, մորդ, կնոջդ, երեխայիդ...

ՎԻՐԱԲ - *(Սրտնեղած)* Ինձ կեսն էլ հերիք է: Եթե օրենքով հասնում է՝ տվեք: Մեկ է, ես եմ աշխատում:

ՆՇԱՆՅԱՆ – Քեզ համար եմ ասում, Վիրաբ: Ինչպես ուզում ես: Հենց այսօր էլ հրաման կտամ: Հա, Վիրաբ...

ՎԻՐԱԲ – Լսում եմ:

ՆՇԱՆՅԱՆ – Դու նամակ գրե՞լ ես քաղսովետի նախագահին:

ՎԻՐԱԲ - *(Ծիծաղում է)* Ընկեր Նշանյան, եթե հարցնեիք, թե կյանքումս ընդհանրապես որևէ նամակ գրած կա՞մ, էլի չէ կասեի:

ՆՇԱՆՅԱՆ – Ա՛յ քեզ բան: Երեկ նախագահը ճիշտ ու ճիշտ քո խոսքերն էր կրկնում:

ՎԻՐԱԲ – Բան չհասկացա, ընկեր Նշանյան:

ՆՇԱՆՅԱՆ – Այ տղա, դու չէի՞ր ասում, թե լավ կլիներ շենքերի բակերից վերացնել մանր-մունր աղբարկղները, որտեղ ամբողջ օրը աղբ է կուտակվում ու աղբի վրա էլ մկներ, կատուներ, շներ, ճանճեր: Դու չէի՞ր ասում, թե մեղք է ժողովուրդը, ամռան շոգին էլ փակում են լուսամուտները, որ աղբի հոտը տուն չլցվի: Թե մանր-մունր երեխաները խաղում են էդ աղբարկղների մոտ, որոնք ոտով գլխով հիվանդության բուն են... Դու չէի՞ր ասում:

ՎԻՐԱԲ – Ես էի ասում...

ՆՇԱՆՅԱՆ – Դե նույնն էլ երեկ, սեսիայում նախագահն ասաց: Ամսի մեկից ավտոմեքենադ մտցնում ես շենքի բակ ու զանգ տալիս: Բնակիչները աղբը դուրս են բերում և ուղիղ լցնում ավտոմեքենայի մեջ: Ոչ աղբարկղ, ոչ հիվանդություն:

ՎԻՐԱԲ – Բա էն մարդիկ, որ գիշերներն են աշխատում, որ անքուն են, ակադեմիկոս Պարսամյանի նման առավոտներն են քնում: Նրա՞նք ինչ անեն:

ՆՇԱՆՅԱՆ – Նրանց համար երեկոները մի պտույտ էլ եք տալիս:

ՎԻՐԱԲ – Ուրեմն մենք տուն չունե՞նք:

ՆՇԱՆՅԱՆ – Աշխատավարձներդ համարյա կիսով չափ բարձրանում է:

ՎԻՐԱԲ – Լավ որոշում է:

ՆՇԱՆՅԱՆ – Այ տղա, ուրեմն ասում ես նամակ չե՞ս գրել, կամ պատահաբար բան չե՞ս ասել իրեն՝ էն օրը, որ քեզ հերթից դուրս „Ժիգուլի,, տվեց...

ՎԻՐԱԲ – Վայ...

ՆՇԱՆՅԱՆ – Ախր ճիշտ քո խոսքերն էր կրկնում...

ՎԻՐԱԲ – Այ ընկեր Նշանյան, եթե ես մտածել եմ, ուրեմն ուրիշներն էլ են մտածել և քաղաքի նախագահն էլ է մտածել... Կամ խոսել-խոսելով խոսքը գնացել վերններն է հասել: Դրա մեջ ի՞նչ կա, որ տանջվում եք:

ՆՇԱՆՅԱՆ – Հա՞... Դե ով գիտի...

(Անցումային երաժշտություն)

(Վիրաբի տանը խնջույք է: Հայկական ժողովրդական ուրախ նվագ է հնչում)

ՄԱՐԳՈ – Վիրա՞բ, էս ի՞նչ ես բերել: Բարև, Վիրաբ ջան:

ՎԻՐԱԲ – Մարգո, էս քեզ...

ՄԱՐԳՈ – Վայ, սրտաճաք արիք, էս ի՞նչ է, այ տղա: Հարբած հո չե՞ս:

ՎԻՐԱԲ – Հա, հարբած եմ, բաց արա...

ՄԱՐԳՈ – Վայ, վայ... *(լաց է լինում)*

ՎԻՐԱԲ – Ինչի՞ ես լաց լինում, այ աղջի:

ՄԱՐԳՈ – Վիրաբ ջան արևիդ մեռնեմ, ձեռքդ ո՞նց է գնացել, էս թանկ ու կրակ մուշտակը առնելու: Ախր սա մի հազար ռուբլի կարժենա:

ՎԻՐԱԲ – Երկու և կես հազար:

ՄԱՐԳՈ – Ինչքա՞ն... մի մկրատ բեր, այ տղա, շուտ արա, կապը չեմ կարողանում քանդել, մեռնում եմ:

ՎԻՐԱԲ – Ունիվերսալի աղբն էի հավաքում, ասացին, թե մուշտակ են ստացել: Գնացի առաջինը կանգնեցի, ասացի մի հատ տվեք: Վաճառողը թե՛ քո բանը չի, Վիրաբ, շատ թանկ է: Որ եղպես ասաց՝ կատաղեցի...

ՄԱՐԳՈ – Բա փո՞ղ որտեղից ճարեցիր, ցավդ տանեմ:

ՎԻՐԱԲ – Ումից ուզեցի, չտվեցին: Վերջը մեր պահակ Սենո բիձան տվեց: Կոոպերատիվ բնակարանի փող է հավաքում... թոռան համար:

ՄԱՐԳՈ – Ես քեզ ո՞րտեղից գտա, տեր աստված:

ՎԻՐԱԲ – Հանրակացարանի սանդուղքի տակից:

ՄԱՐԳՈ – Էդ դու, էդ դու ինձ սանդուղքի տակից գտար ու հանեցիր, արև ջան: *(Լաց է լինում)*

ՎԻՐԱԲ – Այ աղջի, հիմա՞ ինչի էս լաց լինում:

ՄԱՐԳՈ – Բա ի՞նչ անեմ: Ախր հիմա ուզում եմ հագնել: Բա մինչև ձմեռ ո՞նց եմ համբերելու, այ անխիղճ: Մինչև ձմեռ հեյ-հեյ, տես ինչքան կա: Ախ, էս իմ մուրազին հասա, Վիրաբ... Տեխնիկումը ավարտեցի, տուն ունեմ, ավտո ունեմ, մեբեղն ունեմ, կարակուլե մուշտակն ունեմ... Ես քո ցավը տանեմ, Վիրաբ:

ՎԻՐԱԲ – Ուրեմն հասա՞ր մուրազիդ:

ՄԱՐԳՈ – Հա, Վիրաբ ջան, էլ բան չեմ ուզում... Մենակ որ դու առողջ լինես:

ՎԻՐԱԲ – Եղավ: Դե հիմա էլ դու օգնիր, որ էս իմ մուրազին հասնեմ, Մարգո:

ՄԱՐԳՈ – Ասա, ասա, կյանք ջան:

ՎԻՐԱԲ – Արդեն աշխատում ես, Մարգո: Հիմա էլ դու պահիր տունը, ես գնամ սովորելու կամ հեռակայելու պոլիտեխնիկ ինստիտուտին: Ինչքան պիտի այս գործն անեմ, Մարգո ջան, ի՞նչ ես կարծում:

ՄԱՐԳՈ – Ա՛յ մարդ, ա՛յ ցավդ տանեմ, որ սովորես՝ էսքան ստանալո՞ւ ես: Մեր հարևան Համբիկը աչքիդ առաջ չի՞: Տասնհինգ տարի սովորել է, գլուխ է տրաքացրել, ինժեներ է աշխատում հաշվող մեքենայի վրա ու ստացածն էլ ընդամենը հարյուր քսան ռուբլի չէ՞: Քեզնից է սիգարետի փող ուզում: *(Լռություն)* Ես քեզ համար եմ ասում, Վիրաբ ջան: Զահլա ունե՞ս նորից սովորելու, քննություն տալու: Ի՞նչդ է պակաս: Թագավորի պես ապրում ենք...

ՎԻՐԱԲ – Աղբի մեջ... Ինչպես ընկեր Թոռյանն էր ասում:

ՄԱՐԳՈ – Ինչի ես նեղանում, ցավդ տանեմ: Ուզում ես սովորի: Ես քո ձեռքը բռնե՞լ եմ:

ՎԻՐԱԲ – Իսկ ես ուզում եմ, որ դո՛ւ ուզենաս...

ՄԱՐԳՈ – Ուզում եմ, ուզում եմ, Վիրաբ ջան, մանդալի փայտը շարի, հիմա ուր որ է կգան...
(Հեռանում է երգելով)

ՎՕՐԱԲ – Է, սուտ բան է... Հյուրերդ չե՞ն ուշանում, Մարգո:

ՄԱՐԳՈ – Էլ ի՞նչ հայ, որ չուշանա: Զգիտե՞ս, որ եթե ուզում ես մարդիկ ժամը յոթին հավաքվեն, պետք է խնդրես, որ չորսին գան: Մեր Ալլա Կարպովնան ասում է՝ չորս հազար տարվա կուլտուրա ունեցող մարդիկ չորս օրվա կուլտուրա էլ չունեն: Ճիշտ է, էլի...

ՎԻՐԱԲ – Հա, դե ձեր Ալլա Կարպովնան... ուրիշ է, ուրիշ...

ՄԱՐԳՈ – Վիրաբ... պայմանավորվել ենք, չե՞, քաղցր ջան... Գնա պատշգամբ, տես խորովածի համար ամեն ինչ ճի՞ շտ եմ դասավորել:

ՎԻՐԱԲ – Օխա՛յ... բաստուրմա դրած մսի հոտից լավ հոտ չկա: *(Երգում է)* Խորովածի վարպետ եմ ես, շամփուր չունեմ: Կարոտել եմ սիրած յարիս, էլ քուն չունեմ... Կարոտել եմ...

ԹՈՌՉՅԱՆ – Էդ ո՞ւմ ես կարոտել, Վիրաբ:

ՎԻՐԱԲ – Վայ, ընկեր Թոռյան, ինչ լավ արեցիք, որ եկաք:

ԹՈՌՉՅԱՆ – Եվ հյուրերից առաջինը ես եմ:

ՎԻՐԱԲ – Իմ հյուրը դուք եք, ընկեր Թոռյան: Մնացածը Մարգոյի գծով է: Ես գործ չունեմ:
Այնպես որ մենք կարող ենք նստել:

ԹՈՌՉՅԱՆ – Ընդհակառակը, օգտվենք առիթից ու մի քիչ խոսենք, Վիրաբ, սեղանի շուրջը,
միննույն է, խոսել չի լինում: Այնպես որ նստիր ու զեկուցիր, տղաս: Ի՞նչ կա, ինչ չկա,
ո՞նց ես, ոնց չես...

ՎԻՐԱԲ – Ամեն ինչ էլ կա, ընկեր Թոռյան: Ամեն ինչ կարգին է: Տեսնում եք, էլի...

ԹՈՌՉՅԱՆ – Հարցնելն ամոթ չլինի, ինչքա՞ն էս ստանում: Գո՞հ ես:

ՎԻՐԱԲ – Ես միշտ էլ գոհ եմ եղել, ընկեր Թոռյան: Իսկ հիմա գոհ ու գոհ եմ: Ամեն ինչ իրար
հետ ամսական մոտ չորս հարյուր ռուբլի աշխատավարձ եմ ստանում:

ԹՈՌՉՅԱՆ – Պահ, ակադեմիկոսի աշխատավարձ է:

ՎԻՐԱԲ – Ակադեմիկոս Պարսամյանն էլ նույնն է ասում:

ԹՈՌՉՅԱՆ – Ակադեմիկոս Պարսամյա՞նը... Նրան որտեղի՞ց գիտես:

ՎԻՐԱԲ – Նրա աղբը ես եմ հավաքում, թափում, ընկեր Թոռյան:

ԹՈՌՉՅԱՆ – Է, ինչպես տեսնում եմ, խրվել, մնացել ես, տղաս...

ՎԻՐԱԲ – Այ, էսքան էլ չեմ փոշմանել: Ոչ թե նրա համար, որ շատ եմ ստանում: Դա էլ քիչ բան
չի: Գոհ եմ ավելի շատ գիտե՞ք ինչի համար: Էնպիսի մարդկանց հետ եմ հանդիպում,
որ ուրիշները հազարներ կծախսեին՝ հետները ծանոթանալու համար: Իսկ ես
հանդիպում եմ ամեն օր, ձեռքով բարևում են ինձ, տուն են հրավիրում, թեյ են
հյուրասիրում, նստում զրույց ենք անում ու նարդի խաղում: Քի՞չ է:

ԹՈՌՉՅԱՆ – Ախր դու փայլուն հեռանկարներ ունեիր, տղաս... Իսկ հիմա՝ աղբ ես հավաքում,
գոհ ես ու այլևս ոչնչի չես ձգտում: Ես հենց սրանից էի վախենում:

ՎԻՐԱԲ – Մեկն ու մեկը պիտի հավաքի՞ աղբը, թե չէ, ընկեր Թոռյան: Կներեք, իհարկե, բայց
եթե բոլորը ձեզ նման մտածեին, աշխարհը հո կթաղվեր աղբի մեջ...

ՄԱՐԳՈ – Ընկեր Թոռյան, Վիրաբ, ներս եկեք, ծանոթացեք Ալլա Կարպովնայի և մեր մյուս
թանկագին հյուրերի հետ:

ՎԻՐԱԲ – Օֆ, օֆ...

ՄԱՐԳՈ – Ալլա Կարպովնա, ծանոթացեք, ընկեր Թոռյանը մեր... ավտոտեխնիկումի
դիրեկտորն է:

ԱԼԼԱ – Ես այստեղ միայն ձեզ հետ ծանոթ չեմ, բայց ճանաչում եմ: Վիրաբը ձեր մասին շատ է պատմել: Իսկ ես Ալլա Կարպովնան եմ՝ երկրորդ բաժակից հետո՝ ուղղակի Ալլա: Մարգարիտա Պետրովնայի աշխատանքային ընկերուհին: Ահա և իմ ամուսինը՝ երաժշտական դպրոցի կոնցերտմեյստր Վահագն Միրզոյանը: Եվ մեր սիրելի բարեկամը, թույլ տվեք ներկայացնել՝ երաժշտական դպրոցի դիրեկտոր, երաժշտագիտության թեկնածու, պրոֆեսորի պաշտոնակատար Կարեն Մինասյանը:

ՄԱՐԳՈ – Նստում ենք, նստում ենք, նստում ենք:

(Աթոռների աղմուկ)

ՎԻՐԱԲ – Դուք ինչ եք խմելու, ընկեր Մինասյան:

ԿԱՐԵՆ – Ես խմում եմ օղի, առանց փողի և սրտի դողի...

(Բոլորը ծիծաղում են)

ՄԱՐԳՈ – Ալլա Կարպովնա, խնդրում եմ փորձեք այս սալաթը: Եթե դուր գա, ռեցեպտը կտամ:

ԱԼԼԱ – Օ, հաճույքով... Իսկապես ֆենոմենալ է...

ՄԱՐԳՈ – Վահագն Անդրանիկովիչ, ես կխոռովեմ, ինչո՞ւ ոչնչի ձեռք չեք տալիս:

ՎԱՀԱԳՆ – Միրելի Մարգո, թող աչքերս կշտանան, հետո: Եվ թողեք վայելեմ... որ ուտում եմ, խմիչքի անմահական համն այլևս չեմ զգում...

ՄԱՐԳՈ – Ընկեր Մինասյան, բաստուրման փորձեք, իմ ձեռքով եմ սարքել:

ԿԱՐԵՆ – Միրով... Բայց ինչպես մեր չքնաղ Ալլոչկան է ասում՝ երկրորդ բաժակից հետո ես Կարեն եմ:

ՄԱՐԳՈ – Վա՛յ, ինչ եք ասում... Ընկեր Թոռյան, ձեզ...

ՎԻՐԱԲ – Ես ընկեր Թոռյանին նայում եմ:

ԹՈՌՉՅԱՆ - *(Վիրաբին)* Որևէ առիթ կա՞...

ՎԻՐԱԲ – Բա ոնց: Մարգոն ուզում է մեր Մուսանին երաժշտական դպրոց ընդունել: Դաշնամուրը չտեսա՞ք...

ԹՈՌՉՅԱՆ – Բարեկամներ, ձեր մեջ գտնվող տարեց մարդու իրավունքով, խախտելով որոշ կանոններ, առաջարկում եմ խմել այս օջախն ստեղծողների՝ Վիրաբի և Մարգոյի կենացը:

ՎԻՐԱԲ – Ընկեր Թոռչյան...

ԹՈՌՉՅԱՆ – Նրանք իմ զավակներն են, մեծացել են իմ աչքի առաջ, մեր տեխնիկումում:
Մարգոն...

ԱԼԼԱ – Այդ դեպքում Մարգոյին կանչենք... ծափ տվեք...

ԲՈԼՈՐԸ – Մար-գո, Մար-գո...

ՎԱՀԱԳՆ - *(Երգում է)* Սիրո ծաղիկ Մարգարիտա, Մարգո...

ՄԱՐԳՈ – Ի՞նչ է պատահել:

ԹՈՌՉՅԱՆ – Քո կենացը, Մարգո, Վիրաբի կենացը: Դուք մեր ժողովրդի նման շատ տառապանք եք տեսել: Բայց մեր ժողովրդի նման էլ ձեր կենսունակությամբ, ձեր աշխատասիրությամբ, ձեր բնածին տաղանդով ու փոխադարձ սիրով կարողացել եք ոտքի կանգնել ու ստեղծել մի նոր, իսկական հայկական օջախ: Հալալ լինի ձեզ, դուք արժանի եք ամենալավ կյանքի, իմ զավակներ...

ԱԼԼԱ – Մարգո՞, դու է՞լ ես ավտոտեխնիկումը ավարտել:

ՄԱՐԳՈ - *(Շտապով)* Չէ, չէ, մայրս էր այնտեղ աշխատում:

ԿԱՐԵՆ – Բրավո, մաեստրո Վահագն... Էդ ի՞նչ գեղեցիկ ես խմում...

ՄԱՐԳՈ – Այլա Կարպովնա, Սուսանիս չկանչե՞մ նվագի: Դո-ռե-մի-ֆա-սուր անգիր գիտի:

ԿԱՐԵՆ – Ի՞նչ միտք ունի: Համարեք ընդունված:

ԱԼԼԱ – Կարեն, տի պրոստո բոժեստվո:

ԹՈՌՉՅԱՆ – Իսկ եթե լսողություն չունի՞:

ԿԱՐԵՆ – Մեր նպատակը, կոլեգա, տաղանդներ աճեցնելը չէ: Տաղանդն ինքն իրեն էլ սիզախոտի նման ասֆալտը ճեղքելով դուրս կգա: Մեր նպատակն է, որ մեր երեխաները, հայ երեխաները կուլտուրական մարդիկ դառնան, կարողանան որոշ չափով նվագել և երաժշտություն հասկանալ:

ՄԱՐԳՈ – Ես էլ այդ եմ ասում, էլի, ընկեր Մինասյան, ցավդ տանեմ... *(Չիկոնգ)* Ողջ լինեք... Բայց չկարծեք, թե Սուսանս բոլորովին սլուխ չունի: Կուզե՞ք, կանչեմ նվագի: Ես փորձել եմ: Քանի անգամ թխկթխկացնում եմ սեղանին, ինքն էլ ճիշտ այդքան թխկթխկացնում է:

ԿԱՐԵՆ – Դե եթե դուք փորձել եք, տիկին Մարգո, ինձ էլ ի՞նչ է մնում... Թույլ տվեք միայն համբուրել ձեր այդ թխկթխկացնող ձեռքը...

ՎԻՐԱԲ – *(Խելագարված)* Մարգո, տոլման ի՞նչ եղավ...

ՄԱՐԳՈ – Բերում եմ, Վիրաբ ջան, բերում եմ: Քե՞զ ինչ պատահեց, սրտաճաք արեցիր...
(Վիրաբին) Մի քիչ դիմացիր, էլի, հո վայրենի չես:

ՎԻՐԱԲ – Մեկ էլ թիթիզություն ես արել, կսատկացնեմ:

ՄԱՐԳՈ – Ե՛ս նրան խնդրեցի, որ ձեռքս պաշեր: Ես քեզ ասում էի, տանը մի մնա, էլի:

ՎԻՐԱԲ – Տանը մի մնա... Ես քեզ տանը մի մնա ցույց կտամ: Թող հլա գնան... *(Արդեն հյուրերը խառնվել են իրար, խոսում են միաժամանակ)*

ԿԱՐԵՆ – Մաեստրո Վահագն... բրուդերշաֆտ... Ի՛նչ գեղեցիկ ես խմում, սիրելի եղբայր...

ՎԱՀԱԳՆ – Խմելը պոեզիա է, Կարեն Անդրանիկովիչ... Տես...

ԿԱՐԵՆ – Բրավո, մաեստրո...

ՎԱՀԱԳՆ – Հրաշք...

ԱԼԼԱ – Մի անեկդոտ պատմեմ... Ամուսինը տուն է գալիս ու տեսնում է... Չէ, կինը տուն է գալիս ու տեսնում է... կոշմար... չեմ հիշում, թե ով է տուն գալիս ու տեսնում է...

ԿԱՐԵՆ – Բայց ի՞նչ է տեսնում, վերջապես...

ԱԼԼԱ – Յեյ բոգու, չեմ հիշում, բայց այնքան ծիծաղելի էր, կոշմար...

ՄԱՐԳՈ – Ալլա, Ալլա ջան, այն պատմիր, որ...

ԱԼԼԱ – Հա, հա, ուրեմն...

ԹՈՌՉՅԱՆ – Ես գնամ, Վիրաբ...

ՎԻՐԱԲ – Վայ, շուտ չի՞, ընկեր Թոռյան, դեռ խորոված եմ սարքելու...

ԹՈՌՉՅԱՆ – Ինձ խորոված չի կարելի, մեծացել եմ...

(Դուրս են գալիս նախասրահ: Աղմուկը քիչ է)

ՎԻՐԱԲ – Կներեք, ընկեր Թոռյան, մի տեսակ ուրախ չստացվեց:

ԹՈՌՉՅԱՆ – Ոչինչ, ոչինչ, Վիրաբ, միշտ այդպես լինում, երբ սեղանի շուրջ տարբեր ու անձանոթ մարդիկ են հավաքվում: Մի վշտանա և սրտիդ մոտ մի ընդունիր:

ՎԻՐԱԲ – Ձեռքիս ճար լիներ, ես էլ կթողնեի, կգնայի...

ԹՈՌՉՅԱՆ – Լավ, լավ, թեև ուրախ եմ, որ այդ ամենը քեզ էլ դուր չի գալիս: Այդ նշանակում է, որ ես սխալվում եմ և դու դեռ չես խրվել աղբի մեջ: Իսկ հիմա գնա, Մարգոյին մենակ մի թող: Ցտեսություն, Վիրաբ ջան...

ՎԻՐԱԲ – Ըհը, հարբեցին, խառնվեցին իրար... Տեղերը փոխել են: Ալլան հիմա ամուսնու և Կարենի արանքում է նստած: Ջզվում եմ...

ՄԱՐԳՈ – Խորոված չե՞ս անում, Վիրաբ:

ՎԻՐԱԲ – Էլ սրանք խորոված ուտո՞ղ են: Դո՞ւ որտեղ էիր, այ աղջի...

ՄԱՐԳՈ – Մուսանին քնեցրեցի... Խեղճ երեխան սպասեց, սպասեց, որ նվագի, այդպես էլ լսող չեղավ: Լաց էր լինում, հոգիս դուրս եկավ, մինչև հանգստացրեցի:

ՎԻՐԱԲ – Լավ էլ լսողներ ես գտել:

ՄԱՐԳՈ – Ի՞նչ անեմ: Երաժշտական դպրոց ընդունվելու համար գիտե՞ս ինչքան են ուզում: Կրակը վառի, ամոթ է, Վիրաբ ջան, ասել եմ, որ խորոված էլ է լինելու:

ԱԼԼԱ – Ես նրան ասում եմ, որ սխալվել է, իսկ ինքը...

ՎԱՀԱԳՆ – Նա հիմար է, ավարտված ապուշ...

ԱԼԼԱ – Հա, ես ասում եմ...

ՎԱՀԱԳՆ – Իսկ ես ասում եմ, որ նա հիմար է, գանգրահեր ավանակ...

ԿԱՐԵՆ – Վահագն, թող խոսի Ալլան...

ՎԱՀԱԳՆ – Թող նրա մասին չխոսի... Արի խմենք, հա՞, ախպեր ջան, իմ անուշ ախպեր, խմենք, հա՞ ...

ԿԱՐԵՆ – Խմենք, ախպեր ջան, խմենք... իմ միակ ընկեր ու հարազատ...

ՎԻՐԱԲ – Վայ, ես ի՞նչ է անում... Ինչի՞ է հարբեցնում: Իր բաժակ օդին թաքուն թափում է...

ԿԱՐԵՆ – Բրավո, մաեստրո...

ՎԱՀԱԳՆ – Ես քեզ սիրում եմ, Կարեն... դու էլ ինձ սիրո՞ւմ ես, չէ, ասա, սիրո՞ւմ ես...

ԿԱՐԵՆ – Ես քեզանից մոտիկ մարդ ունե՞մ, Վահագն...

ՎԱՀԱԳՆ – Չէ, ասա, սիրո՞ւմ ես, թե չէ... Հը՞, դե որ սիրում ես, մի հատ էլ խմենք իրար հետ ու պաչպչվենք, հա՞ ...

ԿԱՐԵՆ – Խմենք, սիրելի մարդ, խմենք...

ՎԻՐԱԲ – Էս ի՞նչ է անում... Խելքս հո չեմ թոցնում... Աչքի՞ս է երևում, թե... ձեռքը ընկերոջ կնոջ ծնկանն է դրել... *(բղավում է)* Ընկեր Մինասյան, ընկեր Մինասյան...

ԿԱՐԵՆ – Լսում եմ, բարեկամս...

ՎԻՐԱԲ – Խնդրում եմ, եկեք տեսեք խորովածը եղե՞լ է, թե չէ...

ԿԱՐԵՆ – Բայց ես ի՞նչ եմ հասկանում: Ես ընդամենը մի շարքային ուտող եմ, սիրելիս... Սպասեցեք, բայց այստեղ խորոված չկա...

ՎԻՐԱԲ – Քեզ պիտի խորովել, քեզ պիտի վառել, շուն... ժողովուրդ, ընկեր Մինասյանը ընկավ ու էլ վեր չի կենում:

ԱԼԼԱ – Ինչպես թե ընկավ, ինչպե՞ս թե ընկավ, կակոյ կոշմար...

ՄԱՐԳՈ – Որտե՞ղ ընկավ, այ տղա...

ՎԻՐԱԲ – Բալկոնում: Երևի շատ խմեց, հա՞ ...

ԱԼԼԱ – Նա ոչ մի գրամ էլ չի խմել... ոչ մի գրամ... Աբսուրդ... Բոժե մոյ, բոժե մոյ, Կարեն, Կարեն, սիրելիս...

ՄԱՐԳՈ – Շտապ օգնություն կանչե՞մ...

ՎԻՐԱԲ – Երևի կարիք չկա, Մարգո: Ջուր լցրեք գլխին...

ԿԱՐԵՆ – Oh, oh...

ՎԻՐԱԲ – Մի բաժակ ջուր էլ լցրու, Մարգո: Այ աղջի, միանգամից մի լցրու, բռով ցանի, էլի, ոնց որ խառը կանաչու վրա են ցանում: Ապրես: Բա՞, ընկեր Մինասյան, ես ասում եմ իրեն-իրեն ընկավ, ինձ չեն հավատում:

ԿԱՐԵՆ – Այո, այո, ընկա... Ոտքս սայթաքեց ու... Օ՛Ֆ...

ԱԼԼԱ – Կարեն, միլի, բռնե՞մ թևդ...

ՎԻՐԱԲ – Դու գնա ամուսնուդ թևը բռնի... Ես սրան կտանեմ մի կերպ...

(Աղմուկ: Ձայները հեռանում են: Դռան չիկոց)

ՄԱՐԳՈ – Դու խփեցի՞ր, այ տղա:

ՎԻՐԱԲ – Ե՞ս...

ՄԱՐԳՈ – Դու, դու, քո ձեռքը չգիտե՞մ...

ՎԻՐԱԲ – Երևի չգիտես, Մարգո: Հաստատ լավ չգիտես, բայց Սուսանի արևով եմ երդվում, եթե դու դրանց մեկ էլ մեր տուն ես բերել, տանը լինեմ, թե չլինեմ, նշանակություն չունի, եթե դրանք մեր տուն են մտել, կիմանաս...

ՄԱՐԳՈ – Էսքան էլ ծախս արեցի ու հե՛ջ...

(Անցումային երաժշտություն)

(Աղբատար մեքենայի հոնդյունը: Լռություն: Հնչում է պղնձե զանգի ձայնը: Աղմուկ է սկսվում)

ՄԻ ԿԻՆ – Լսիր, այ ընկեր, էլի տասը բուպե շուտ եք եկել: Ինչու եք առավոտ շուտ քնահարամ անում մարդկանց, անխիղճ, անիրավներ...

ՎԻՐԱԲ – Ձեր ժամացույցը ինչպես միշտ տասը բուպե հետ է, տիկին Էմմա...

ԷՄՄԱ – Ինչ ես խոսում, տատիս հիշատակն է, Սարկիսով է...

ԿՆՈՋ ՁԱՅՆ – Մացակ Գավրիլիչ, բոլորը գցի, բայց վերևի տուփը ետ բեր, դատարկի նոր բեր, հա՞...

ՄԱՅԱԿ – Եղավ, Լյուդա ջան, եղավ, հոգիս... Ընկեր վարորդ, չե՞ք կարող մեքենան մեր մուտքի մոտ կանգնեցնել: Մա՞ ինչ խայտառակություն է: Ի՞նչ է, ուզում եք նորի՞ց զանգ տամ ձեր պետին:

ՎԻՐԱԲ – Ջանգ տվեք: Երեխաներ ջան, տվեք ձեր դույլերը: Ապրես, տղա ջան, հայրդ թող ուրախանա, որ քեզ նման տղա ունի: Ապրես, աղջիկ ջան, ապագադ համարի ապահովված:

ՁԱՅՆ – Աղբ, աղբ ջան, չգնաս, հիմա գալիս եմ...

ՎԻՐԱԲ – Եկեք, եկեք...

ՊԱՐՍԱՄՅԱՆ – Բարի լույս, սիրելի Վիրաբ...

ՎԻՐԱԲ – Ընկեր Պարսամյա՞ն, ինչո՞ւ եք դուք բերել: Սպասում էի՝ մի քիչ թեթևանա գործը, որ գամ ես բերեմ:

ՊԱՐՍԱՄՅԱՆ – Դե հո չի կարելի ամեն անգամ...

ՎԻՐԱԲ – Կարելի է: Ես սրտանց եմ անում... Ինձ տվեք տուփը... բժշկին կասեմ, ընկեր
Պարսամյան:

ՊԱՐՍԱՄՅԱՆ – Ի՞նչ կասեք:

ՎԻՐԱԲ – Որ նրա ասածները հաշվի չեք առնում ու չեք հետևում ձեզ:

ՊԱՐՍԱՄՅԱՆ – Ինչի՞ց եզրակացրիր, Վիրաբ:

ՎԻՐԱԲ – Հոգիս դուրս եկավ ձեր դեղերը թափելով: Էս ի՞նչ է, էս ի՞նչ է... Կասեմ բժշկին...

ՊԱՐՍԱՄՅԱՆ - *(Հազում ու ծիծաղում է)* Մի հին անեկդոտ կա, Վիրաբ, բայց ինձ շատ է դուր
գալիս: Ասում է. բժիշկը դեղատոմս է գրում, որովհետև ուզում է ապրել: Դեղագործն էլ
դեղ է պատրաստում, որովհետև ուզում է ապրել: Իսկ հիվանդն էլ դեն է գցում դեղը,
որովհետև ինքն էլ է ուզում ապրել: Լավ է, չէ՞ ...

ՎԻՐԱԲ – Լավ է, բայց մեկ է, բժշկին կասեմ...

ՊԱՐՍԱՄՅԱՆ – Երեկոյան եթե ազատ լինես, եկ նարդի խաղանք, Վիրաբ...

ՎԻՐԱԲ – Այսօր չէ, ընկեր Պարսամյան, էգուց, հա՞ ...

ՊԱՐՍԱՄՅԱՆ – Վաղն արի...

ԿԱՐԼՈՍ - *(Վիրաբին)* Ախպեր, մի մեր կողմն արի...

ՎԻՐԱԲ – Լսում եմ...

ԿԱՐԼՈՍ – Էս փողը դիր գրպանդ: Էգուցվանից մեր աղբն էլ կհանես:

ՎԻՐԱԲ – Չէ, չի լինի: Կարգ կա:

ԿԱՐԼՈՍ – Թե քիչ ա, էլի տամ:

ՎԻՐԱԲ – Չէ, որ տասնապատիկ էլ տաս, չի լինի:

ԿԱՐԼՈՍ – Յա, ինչի՞, դու էդ ինչի՞ տեր ես:

ՎԻՐԱԲ – Իմ աշխատավարձը քոնից մի հինգ անգամ ավել կլինի: Պահեստապետ չե՞ս...

ԿԱՐԼՈՍ – Աշխատավարձը... Արա, Աբրահամ, որ էս աղբ թափողին տեսնում եմ, պատռելու
գալիս ա: Ակադեմիկոսի աղբը ձրի թափում ա, իմը փողով չի թափում:

ԱԲՐԱՀԱՄ – Եթե անանկ է, դուն ալ ակադեմիկոս դառ...

ԿԱՐԼՈՍ – Յա...

ԱԲՐԱՀԱՄ – Վերջին տուփս էր... նետում եմ, Վիրաբ եղբայր... Երկու օրում կերան լակոտները, զեյթուն եմ ասել, է՛...

ՎԻՐԱԲ – Բեյրութում զեյթուն կա՞ր, Աբրահամ քեռի...

ԱԲՐԱՀԱՄ – Բեյրութում: Բեյրութում ի՞նչ չկար, մանչս: Բեյրութում ո՞վ էր իսպանական զեյթունի երեսը նայողը, բաբամ, հունական զեյթուն կուտեինք՝ սև, փայլուն, ամեն մեկը մի ընկույզի չափ: Բեյրութում ի՞նչ չկար, անուշս, քիշմիշ չամիչն ասեմ, մեղրածոր թխվածքներն ասեմ, բաղամն ու լերլերին ասեմ... Լերլերի կերած կա՞ս: Բա՞: Մեջն ի՞նչ, քանդեցին, ավերակ դարձրին... Գետինն անցնեն անիրավները: Հեռատեսիլի մեջ կնայեմ, կուլամ, մանչս...

ՎԻՐԱԲ – Լավ, էս ապրանքն ինչի՞ էք թափում, ա՛յ մարդ, ափսոս չի՞... Բա դուք հե՞ր չունեք, մե՞ր չունեք, մի կարիքավոր ընկե՞ր չունեք... գոնե ձեր գտեք, էն խեղճ ուսանողներին տվեք, սոված են մնում, օրերով աղբ չեն ունենում թափելու: Էս ի՞նչ էք անում: Մարդ էք, չե՞ք...

ԿԱՐԼՈՍ – Յա, էդ էլ ա քեզ վերաբերո՞ւմ: Քո գործը աղբ թափելն ա, թափի... Քեզ դրա համար փող են տալիս... Իմ աշխատավարձից էլ հինգ անգամ ավել... Գլխներիս գոսկոնտրոլ է դարձել...

ՎԻՐԱԲ – Ա՛խ, ինչ գոսկոնտրոլ, եթե թողնեին՝ կծեծեի...

ԿԱՐԼՈՍ – Յա... Կրակն ենք ընկել ձեռքը: Ում վրա շուն է հաչում, մեր վրա կատու է մլավում:

ՅՈՂԻԿ – Էս գիշեր չե՞ս գա, Վիրաբ:

ՎԻՐԱԲ – Չե՛ք...

ՅՈՂԻԿ – Դու գիտես... Անտոն Եգորիչը գործուղման մեջ է:

ՎԻՐԱԲ – Չեմ գա... ոչ էսօր, ոչ էգուց, ոչ մի անգամ...

ՅՈՂԻԿ – Վախկո՛տ... *(Բարձրաձայն ծիծաղելով հեռանում է)*

ԽՈՍՐՈՎ – Բարի լույս, Վիրաբ քեռի... Հը, ինչպե՞ս է կոստյումս...

ՎԻՐԱԲ – Խոսք չկա: Հիմա էլ ո՞վ կարող է մերժել քեզ:

ԽՈՍՐՈՎ – Ճիշտ է: Եվ հենց էդպես էլ եղավ, Վիրաբ քեռի:

ՎԻՐԱԲ – Ի՞նչ եղավ:

ԽՈՍՐՈՎ – Վիրաբ քեռի, մի բան եմ ուզում խնդրել ձեզ: Ես Երևանում ձեզանից ավելի մոտ, սրտացավ բարեկամ չունեմ, որ նրան ասեմ:

ՎԻՐԱԲ – Լսում եմ, Խոսրով:

ԽՈՍՐՈՎ – Եթե հարկ լինի, իսկ ես կարծում եմ շուտով հարկ կլինի, գնալ Մարինեկն սուն, ինչպես իրենք են ասում՝ խոսք ուզելու, դուք կգա՞ք ինձ հետ իմ ծնողի փոխարեն՝ որպես իմ բարեկամ, իմ հարազատ, ինձ երաշխավորող...

ՎԻՐԱԲ – Ուրեմն ամեն ինչ կարգի՞ն է: Դեղատան աղջի՞կն է... իսկ դու հուսահատվել էիր, լաց էիր լինում, թե չի ուզում...

ԽՈՍՐՈՎ – Հա, Վիրաբ քեռի, ամեն ինչ կարգին է, վերջը համոզեցի:

ՎԻՐԱԲ – Իսկ ինչո՞ւ քո ծնողներին գյուղից չես կանչում, Խոսրով: Չե՞ն վիրավորվի:

ԽՈՍՐՈՎ – Հայր չունեմ: Իսկ մայրս հիվանդ է և հետո տուն-տեղը չի թողնի: Ինձնից բացի, տանը չորս երեխա էլ կա: Հետո կով ունենք, հավեր ունենք...

ՎԻՐԱԲ – Խոսրով ջան, չկարծես թե ձևի համար եմ ասում, դու ինձ ճանաչում ես: Ես որքանո՞վ եմ հարմար: Վաղը, մյուս օրը կիմանան, որ եղած-չեղածը աղբ հավաքող վարորդ եմ:

ԽՈՍՐՈՎ – Դո՞ւք: Դուք ինձ հանդիպած ամենամեծ մարդն եք: Իսկ որտե՞ղ է գրված, թե աղբ թափողն ավելի լավն է, քան աղբ հավաքողը: Մարինեն արդեն գիտի ձեզ, Վիրաբ քեռի: Եվ հարգում է, ինչպես ես եմ հարգում: Նա գիտի նույնիսկ, որ ես ձեր տված դրամով եմ գնել այս կոստյումը:

ՎԻՐԱԲ – Դա՞ ինչ ասելու բան էր:

ԽՈՍՐՈՎ – Իսկ ինչո՞ւ պետք է չասեի: Լավի ու բարու մասին ամեն խաչմերուկում պետք է աղաղակել, Վիրաբ քեռի:

ՎԻՐԱԲ – Իսկական բանաստեղծ ես, Խոսրով... Եվ ուրեմն նպատակ ունես ինստիտուտն ավարտելուց հետո այդ աղջկա՞ն էլ հետո գյուղ տանել...

ԽՈՍՐՈՎ – Կարծես թե համոզվում է, Վիրաբ քեռի, ուրեմն կգա՞ք:

ՎԻՐԱԲ – Մեծ ուրախությամբ: Մարգոյի թեր կրոնեմ ու կգամ:

ԽՈՍՐՈՎ – Ուրեմն մի բան էլ պետք է խնդրեմ:

ՎԻՐԱԲ – Ի՞նչ:

ԽՈՍՐՈՎ – Այսօր երեկոյան շա՞տ զբաղված եք:

ՎԻՐԱԲ – Այսօր երեկոյա՞ն: Չէ:

ԽՈՍՐՈՎ – Ուրեմն եկեք մեր տուն, շատ եմ խնդրում: Ես ուզում եմ, որ դուք տեսնեք իմ Մարինեին:

ՎԻՐԱԲ – Խոսքով...

ԽՈՍՐՈՎ – Շատ եմ խնդրում: Չե՞ որ դուք էլ ընդունեցիք, որ իմ հարազատն եք: Ընդունեցիք, չե՞...

ՎԻՐԱԲ – Դե լավ, լավ, կգամ, Խոսքով...

(Անցումային երաժշտություն)

ԽՈՍՐՈՎ –

*Լուսամփոփի պես աղջիկ, աստվածամոր աչքերով,
Թոքախտավոր, թափանցիկ, մարմինի պես երազի,
Կապույտ աղջիկ ակաթի ու կաթի պես հոգեթով,
Լուսամփոփի պես աղջիկ...*

Չարենցը քո մասին է գրել, Մարինե...

ՄԱՐԻՆԵ - *(Ծիծաղում է)* Չեմ ուզում. ոչ ուզում եմ հոգեթով լինել, ոչ էլ թոքախտավոր: Դու՛ գրի իմ մասին, Խոսքով... դու... ավելի լավ կգրես:

ԽՈՍՐՈՎ – Վա՛խ, աստված ձայնդ լսի, Մարինե... Բայց դեռ քո մասին չեմ համարձակվում գրել: Այ, երբ քեզ տանեմ Վրաստանի մեր հայկական գյուղը՝ Բոգդանովկա, նոր կգրեմ քո մասին:

ՄԱՐԻՆԵ – Գոնե դեղատուն ունե՞ք, Խոսքով:

ԽՈՍՐՈՎ – Ամեն ինչ ունենք, չքնադս, նույնիսկ Փարվանա լիճ ունենք, լսե՛ լ ես...

ՄԱՐԻՆԵ – Լսել եմ... կարդացել եմ դայրոցում, բայց ես...

ԽՈՍՐՈՎ – Եկա՞ք, Վիրաբ քեռի, ինչքան ուրախ եմ... դե հիմա ծանոթացեք:

ՎԻՐԱԲ – Վիրաբ:

ՄԱՐԻՆԵ – Մարինե:

ԽՈՍՐՈՎ – Իհարկե, սա ձևականություն էր, որովհետև երկուսդ էլ հիանալի գիտեք իրար: Եվ եթե իմ Մարինեն թույլ տա, շուտով ավելի մոտիկից կիմանաք:

ՄԱՐԻՆԵ – Քիչ խոսիր, Խոսրով...

ԽՈՍՐՈՎ – Վիրաբ քեռի, ես ճիշտ չեի՞ ասում, Մարինեն չքնաղ է, չէ՞ ...

ՄԱՐԻՆԵ – Խոսրով...

ԽՈՍՐՈՎ – Ճիշտ չեի՞ ասում, ճիշտ չեի՞ ասում...

ՎԻՐԱԲ – Ճիշտ էիր ասում, դու միշտ էլ ճիշտ ես ասել, Խոսրով:

ԽՈՍՐՈՎ – Հա, ես այդպես եմ, դրա համար էլ ամբողջ կյանքում ծեծ եմ կերել... Ճիշտ խոսելու համար:

ՄԱՐԻՆԵ - *(Օրծաղում է)* Ուրեմն քիչ են ծեծել...

ԽՈՍՐՈՎ – Վիրաբ քեռի, ինչ եք ասում, մի-մի բաժակ գինի չխմե՞նք այս նշանավոր օրվա առթիվ: *(Բաժակների չիկչիկոց)* Խմենք այս օրվա կենացը: Նրա համար, որ Մարինեն առաջին անգամ մեր տուն մտավ: Նրա համար, որ Մարինեն առաջին աղջիկն է իմ կյանքում, որ այս տունն է մտնում: Խմենք Մարինեի և իմ երջանկության կենացը... Շատ եմ խոսո՞ւմ, Վիրաբ քեռի, ախր ես կյանքումս գինի խմած չկայի...

ՎԻՐԱԲ – Ամեն ինչ տեղին է: Ձեր կենացը, Մարինե, քո կենացը, Խոսրով: Դու գիտես, որ ես սիրում եմ քեզ: Եվ գիտես, որ մեր ամբողջ թաղամասն է սիրում քեզ, որովհետև բարի ես...

ԽՈՍՐՈՎ – Գիժ եմ, գիժ...

ՎԻՐԱԲ – Որովհետև ընդամենը ուսանող լինելով, տանդ գրադարան ես բացել ու գրքեր ես բաժանում ու սովորեցնում ես թաղամասի երեխաներին:

ԽՈՍՐՈՎ – Գիժ եմ, գիժ, չէ՞, Մարինե...

ՎԻՐԱԲ – Եվ ոչ միայն երեխաներին: Մենք բոլորս պարտական ենք քեզ, Խոսրով:

ԽՈՍՐՈՎ – Հա, Վիրաբ քեռի, մայրիկը դրամ է ուղարկել, ձեր պարտքը...

ՄԱՐԻՆԵ – Խոսրով...

ԽՈՍՐՈՎ – Շատ, շատ կներեք, ազնիվ խոսք, ես չեմ խոսում, այս անիծյալ լեզուս է իրեն-իրեն խոսում: Ներեցեք ինձ, Վիրաբ քեռի:

ՎԻՐԱԲ – Ես ձեզ երկար կյանք եմ ցանկանում, Մարինե, սիրելի Խոսրով... Եվ շատ եմ ուզում, որ երջանիկ լինեք: Ձեր կենացը:

ՄԱՐԻՆԵ – Շատ շնորհակալություն...

ԽՈՍՐՈՎ – Ուռռա, կեցցեք, Վիրաբ քեռի...

ՎԻՐԱԲ – Ի՛նչ հետաքրքիր մատանի է... ձեր ձեռքին, աղջիկս... Ես մի անգամ էլ եմ տեսել, բայց չգիտեմ որտեղ, ում ձեռքին... Որտե՞ղ էր...

ԽՈՍՐՈՎ – Ի՞նչը, օձը՞... օձը իմաստության նշան է, Վիրաբ քեռի... Հանկարծ Մարինեիս բնավորության մասին գուգահեռ չանցկացնեք... Չէ՞, չքնաղս, չ՞է, հոգիս...

ՄԱՐԻՆԵ – Վայ, ես քեզ այսպես չէի տեսել, Խոսրով, ավելի լավ չէ՞ր գնայիր պաղպաղակ բերելի մեզ համար: Թե քեզ օգուտ կլինի, թե մեզ...

ԽՈՍՐՈՎ – Պաղպաղակ՞ կ... Ես թռա, տիրուհիս: Վիրաբ քեռի, Մարինեին չթողնեք գնա, մինչև ես գամ:

ՎԻՐԱԲ - *(Օրծաղում է)* Չեմ թողնի, չէ... Փող կա՞ մոտդ, վերցրու...

ԽՈՍՐՈՎ – Չէ, չէ, մայրիկս ուղարկել է...

(Դռան չխկոց)

ՎԻՐԱԲ – Չկարծեք թե հենց այնպես, խոսքի համար եմ ասում, Մարինե, Խոսրովն աննման տղա է, շատ մաքուր ու ազնիվ...

ՄԱՐԻՆԵ – Մի հատ սիգարետ էլ ինձ տվեք, էլի, վարպետ, շունչս կտրվում է...

ՎԻՐԱԲ – Ի՞նչ... Ախ, սիգարետ... Խնդրեմ, Մարինե:

ՄԱՐԻՆԵ – Խոսրովը չի սիրում, որ ծխում եմ: Ես էլ աշխատում եմ խուսափել, չեմ ծխում նրա մոտ: Ուզում եմ ընդհանրապես թողնել: Բայց չի լինում: *(Լռություն)*

ՎԻՐԱԲ – Երկաթուղային կայարանի մո՞տ ես ապրում, Մարինե...

ՄԱՐԻՆԵ – Այո...

ՎԻՐԱԲ – Անկյունի շենքո՞ւմ...

ՄԱՐԻՆԵ – Այո, իսկ դուք որտեղից գիտեք, Խոսրոօ վն է ասել:

ՎԻՐԱԲ – Չէ, ես քեզ մի անգամ տուն եմ տարել:

ՄԱՐԻՆԵ – Ի՞նչ, չեմ հիշում, ե՞րբ, ինչով...

ՎԻՐԱԲ – Աղբի մեքենայով... Առավոտվա ժամը հինգն էր... Անձրն էր գալիս... Մի տղա կանգնեցրեց իմ ավտոն ու խնդրեց քեզ կայարան տանեմ... Դու հարբած էիր... չէիր կարողանում քայլել... Քո շունչն էլի կտրվում էր... սիգարետ ուզեցիր... ու էդ օձն էլի քո մատին էր...

ՄԱՐԻՆԵ – Հիշեցի, լավ, լավ, հիշեցի... հերիք ե...

ՎԻՐԱԲ – Մարինե, Խոսրովը միամիտ, պարզ տղա է ու հոգով երեխա է դեռ...

ՄԱՐԻՆԵ – Իսկ ես փչացած եմ...

ՎԻՐԱԲ – Ես էդպիսի բան չասացի: Ես ո՞վ եմ, որ դատեմ-դատապարտեմ մարդկանց:

ՄԱՐԻՆԵ – Դա էիք ուզում ասել:

ՎԻՐԱԲ – Չէ, ես միայն ուզում եմ ասել, որ դուք շատ տարբեր մարդիկ եք, լրիվ տարբեր:

ՄԱՐԻՆԵ – Որտեղի՞ց գիտեք:

ՎԻՐԱԲ – Գիտեմ, մի օր կհանդիպի մեկը, որ քեզ համապատասխան կլինի: Անպայման կհանդիպի, Մարինե: Իսկ Խոսրովը մեղք է: Վաղ թե ուշ նա ամեն ինչ կիմանա: Էդ բաները թաքցնել չի լինում, կիմանա ու կդառնա աշխարհի ամենաաղճաբախտ մարդը: Եվ ով գիտի, թե ինչ կլինի հետո... Եկ ձեռք քաշիր Խոսրովից, Մարինե...

ՄԱՐԻՆԵ – Իսկ եթե այդ միամիտ, մաքուր տղա՞ն է իմ միակ հույսը: Իսկ եթե նրա կողքին ես էլ եմ մաքրվո՞ւմ: Իսկ եթե միայն նա կարող է ինձ տանել, ազատել, փրկել իմ շրջապատից... իր սիրով, իր հավատով... Տեսաք, չէ՞, նրա մոտ արդեն չեմ ծխում, ամաչում եմ: Քի՞չ է: (*Պառլա: Փղձկում է*) Տեսնո՞ւմ եք, որ փորձում եմ...

ՎԻՐԱԲ – Ի՞նչ իմանամ, ի՞նչ իմանամ...

ՄԱՐԻՆԵ – Ես ինքս էի հրաժարվում... ձեզ չի՞ ասել...

ՎԻՐԱԲ – Ասել է...

ՄԱՐԻՆԵ – Սիրում է, ի՞նչ անեմ... Ու ես էլ նրան եմ սիրում...

ՎԻՐԱԲ – Ինչ ասեմ...

ՄԱՐԻՆԵ – Ես գնում եմ... Ես չեմ ուզում, որ նա ինձ այսպես տեսնի... *(Ոտնաձայն)* Իսկ դուք նրան...

ՎԻՐԱԲ – Չեմ ասի... Միայն թե սիրտս շատ է ցավում Խոսրովի համար: Ոնց որ իմ տղան լինի: Մի նեղացի...

ՄԱՐԻՆԵ – Դուք մի ասեք, հա՞... խնդրում եմ... Ես կասեմ... իսկ ինքն ինչ ուզում է թող որոշի: Ես ինքս կասեմ, հա՞:

ՎԻՐԱԲ – Դուք գիտեք:

ՄԱՐԻՆԵ – Բարի գիշեր...

ՎԻՐԱԲ – Բարի գիշեր... Իսկ դու ի՞նչ գիտես, է՛: Ի՞նչ գիտես ճիշտը որն է: Դու ամեն ի՞նչ գիտես, Վիրաբ:

(Անցումային երաժշտություն)

(Մազնիտոֆոնի խլացուցիչ ձայն է գալիս)

ՄԱՐԳՈ – Աղջի, Սուսան, դրա ձենը կտրի, խլացանք...

ՍՈՒՍԱՆ – Ի՞նչ է եղել, մամ...

ՄԱՐԳՈ – Կամաց չե՞ս կարող միացնել, թմբկաթաղանթներս պայթեցին:

ՍՈՒՍԱՆ – Սա այնպիսի նվագ է, տիկին Մարգո, որ եթե բարձր չես միացնում, գործիքների նուրբ ձայները չեն լսվում, հասկանալի է:

ՄԱՐԳՈ – Էհ, զահլես գնաց, ե՞րբ ես տնից գնալու՝ գլուխս հանգստանա:

ՍՈՒՍԱՆ – Մամ...

ՄԱՐԳՈ – Ասա...

ՍՈՒՍԱՆ – Ի դեպ՝ գնալու մասին, դու ժամանակավորը նկատի ունեիր, թե մշտականը...

ՄԱՐԳՈ – Ինչ է, նորությունն կա...

ՍՈՒՍԱՆ – Մեր ասպիրանտներից մեկը կա... պտտվում է չորս կողմս, ինչ-որ ակնարկներ է անում:

ՄԱՐԳՈ – Ո՞վ է, ինչ է...

ՍՈՒՍԱՆ – Ես ի՞նչ իմանամ: Գևորգ է անունը:

ՄԱՐԳՈ – Ծնողներ՞ ըր ինչացու են:

ՍՈՒՍԱՆ – Շա՞տ գիտեմ: Բայց հագնվում է՝ ըհը...

ՄԱՐԳՈ – Դե ուրեմն ունևոր կլինեն, էլի...

ՍՈՒՍԱՆ – Իր ավտոմեքենայով է ինստիտուտ գալիս...

ՄԱՐԳՈ – Դրան ձեռքիցդ բաց մի թող, այ աղջի...

ՍՈՒՍԱՆ – *(Կոտրատվելով)* Առայժմ ինքն է ուզում ինձ բռնել...

ՄԱՐԳՈ – Դու հասցեն իմացիր, ես տեղեկություններ կհավաքեմ...

ՍՈՒՍԱՆ – Հնություն՞ն...

ՄԱՐԳՈ – Ես մի՛ աղջիկ ունեմ...

ՍՈՒՍԱՆ – Հիմա ո՞վ է մի երեխայից ավել ունենում: Նույնիսկ դուք, ինձ ոչ քույր եք տվել, ոչ եղբայր...

ՄԱՐԳՈ – Մի անգամ տուն բեր, տեսնենք ով է...

ՍՈՒՍԱՆ – Ահա, վերջապես, տիկին Մարգո, մոտեցաք բուն հարցին: Մեր երեխաները կպել են, թե մի օր հավաքվենք ձեր տանը:

ՄԱՐԳՈ – Դու գիտես, որ հայրդ ձեր հավաքները չի սիրում... Չե՞ս հիշում անցյալ անգամ...

ՍՈՒՍԱՆ – Չի սիրում, թող տուն չգա: Ուրիշները ո՞նց են անում, մենք մեկի տանը հավաքվում ենք, թե չէ՝ ծնողները սուսիկ-փուսիկ դուրս են գալիս և գիշերը միայն հեռախոսով են հարցնում՝ տուն գան թե չէ:

(Հեռախոսը զանգում է)

ՄԱՐԳՈ – Լսում եմ, ալո, ... Ո՞վ է...

ՎԻՐԱԲ – Մարգո, Վիրաբն է, Մարգո, Թոռյանն է մեռել...

ՄԱՐԳՈ – Ո՞վ...

ՎԻՐԱԲ – Թոռյանը... մեր Թոռյանը...

ՄԱՐԳՈ – Ե՞րբ...

ՎԻՐԱԲ – Ե՞րբ... ի՞նչ գիտեմ՝ երբ: Հենց նոր պատահաբար „Երևան,, թերթում կարդացի: Մի ժամից թաղում են:

ՄԱՐԳՈ – Որտե՞ղ...

ՎԻՐԱԲ – Քաղաքային գերեզմանատանը: Ես գնում եմ: Գերեզմանատան դարպասի մոտ կսպասեմ քեզ: *(Լռություն)* Լսո՞ւմ ես, Մարգո, Մարգո ...

ՄԱՐԳՈ – Ես ո՞նց եմ գալիս, այ տղա: Մուրաբա եմ եփում:

ՎԻՐԱԲ – *(Ծանր շունչ է քաշում)* Հետո կեփես:

ՄԱՐԳՈ – Կրակի վրա է, Վիրաբ...

(Լսափողի չիսկոց)

(Անցումային երաժշտություն)

ՄԱՐԳՈ – Թաղեցի՞ք:

ՎԻՐԱԲ – Է՛հ...

ՄԱՐԳՈ – Խեղճ մարդ... Շա՞տ մարդ կար...

ՎԻՐԱԲ – Հա, բայց պատկերացնո՞ւմ ես, տեխնիկումից մարդ չկար...

ՄԱՐԳՈ – Թոշակի անցնելուց հետո ո՞ւմ է պետք մարդը:

ՎԻՐԱԲ – Էս ի՞նչ կյանք է: Թերթում գրված է՝ թե երկարատև ու ծանր հիվանդ է եղել ընկեր Թոռյանը: Երկարատև ու ծանր: Իսկ ես չեմ էլ իմացել: Միակ մարդը աշխարհում, որ ինձ ասում էր՝ տղաս... Այն մարդը, որ կես խոսքից հասկանում էր ինձ, վախենում էր ինձ համար ու զգուշացնում էր. „Հանկարծ չխրվես աղբի մեջ ու մնաս, տղաս,,:

ՄԱՐԳՈ – Դե լավ, լավ, քեզ մի տանջի, Վիրաբ ջան: Կյանք է, էլի:

ՎԻՐԱԲ – Գոնե՛ զանգ տար մի անգամ, ասեր՝ հիվանդ եմ, ի՞նչ կլիներ: Հա, բայց ե՞ս ինչի զանգ չեի տալիս, ե՛ս... հիշել եմ, հա, հա, միշտ հիշել եմ ... բայց մտածել եմ, թե վաղը զանգ կտամ, մյուս օրը զանգ կտամ: Դե տուր: Էլ վաղը չկա: Ու չի լինելու:

ՄԱՐԳՈ – Հա՞ց բերեմ, թե խոհանոց կգաս:

ՎԻՐԱԲ – Ասում էր՝ հանկարծ չխրվես աղբի մեջ ու մնաս, տղաս: Բա ի՞նչ եմ արել, որ չեմ խրվել: Էլ խրվելը ո՞նց է լինում: Մա՞ ինչ ցավ է, ինչի՞ է մեզ թվում, թե ժամանակը կանգնած է ու մենք հավիտենական ենք: Ինչո՞ւ: Ինչո՞ւ ենք մտածում, թե ժամանակ դեռ շատ ունենք, դեռ կհասցնենք տալ մեր պարտքերը, շնորհակալ լինել մեզ բարություն արած մարդուն, օգնության հասնել ընկերոջը, փորձանքից զգուշացնել բարեկամին, հարևանի խաթրն առնել...

ՄԱՐԳՈ – Ա՛յ տղա, հո չե՞ս խմել...

ՎԻՐԱԲ – Եվ ինչի՞ համար ենք այս բոլորի մասին մտածում, փիլիսոփա դառնում միայն գերեզմանատանը, իսկ հետո մոռանում իսկույն: Որովհետև բոլորս էլ անգիտակցաբար թե մեր կամքով խրվել ենք աղբի մեջ ու մնացել, Մարգո: Ճիշտ էր ասում ընկեր Թոռյանը, ճիշտ էր ասում:

ՄԱՐԳՈ – Ասում եմ՝ ուզո՞ւմ ես ճաշն այստեղ բերեմ:

ՎԻՐԱԲ – Չէ, սոված չեմ, Մարգո:

ՄԱՐԳՈ – Իսկ ո՞վ ուներ, ի՞նչ ուներ:

ՎԻՐԱԲ – Չգիտեմ... Բայց երկու մեծ տղերք ուներ... իրեն էլ շատ նման... Դագաղը նրանք էին տանում:

ՄԱՐԳՈ – Խոսողներ շա՞տ եղան:

ՎԻՐԱԲ – Չէ: Երկու հոգի էին: Մեկը հարևանն էր, մյուսն էլ իրենց գյուղացի մի մարդ: Բայց մի կարգին բան չասացին: Շատ ջղայնացա: Հասկապես, որ ավտոտեխնիկումից մարդ չկար:

ՄԱՐԳՈ – Դու հո չխոսեցի՞ր:

ՎԻՐԱԲ – Ե՞ս: Բա ի՞նչ պիտի անեի: Չպիտի՞ խոսեի:

ՄԱՐԳՈ – Ի՞նչ ասացիր, այ տղա:

ՎԻՐԱԲ – Ասացի՞ ես ընկեր Թոռյանի աշակերտն եմ եղել: Հայր չեմ ունեցել և նա խորհրդատու հայր է եղել ինձ համար: Հաց չեմ ունեցել, ինձ հաց է տվել ընկեր Թոռյանը: Տուն չեմ ունեցել, թույլ է տվել, որ կնոջս հետ տեխնիկումի շենքում ապրեմ, մինչև տուն ստանալը...

ՄԱՐԳՈ – Դա՞ ինչի էիր ասում, այ մարդ:

ՎԻՐԱԲ – Բա ի՞նչ պիտի անեի: Ասացի՞ և ոչ միայն ինձ համար, տեխնիկումի բոլոր ուսանողների համար հայր է եղել ընկեր Թոռյանը: Եթե մենք այսօր ավտոմեքենաներ

նստած մի կտոր հացի տեր ենք դարձել, պարտական ենք ընկեր Թոռյանին: Բայց նա միայն հաց չի տվել մեզ, ասացի, նա մեզ սովորեցնում էր հարգել հացը, բարի լինել ու ազնիվ, օգնել իրար ու բոլոր նրանց, ովքեր օգնության կարոտ են: Նա ուզում էր, որ մենք մարդ դառնանք ու ասում էր՝ զգույշ մնացեք, հանկարծ չխրվեք մնաք կյանքի աղբի մեջ: Եվ եթե մենք չենք կարողանում կատարել նրա իմաստուն խորհուրդները, ասացի ես, մեղավորը ինքը չէր: Մենք ժամանակ չունեինք: Մենք հաց էինք կուտակում նեղ օրվա համար ու... մուրաբա եփում:

ՄԱՐԳՈ – Վայ, հո խայտառակ չե՞ս, մուրաբայի մասին ինչի՞ էիր խոսում...

ՎԻՐԱԲ – Էդ ոչինչ: Ամենակարևորը դրանից հետո ասացի: Ժողովուրդ ջան, ասացի, ես տեսնում եմ, որ դուք լաց չեք լինում ընկեր Թոռյանի վրա: Եվ ճիշտ եք անում: Ինչի՞ համար լաց լինեք: Նա ապրել է այնպես, ինչպես կերպեր ապրել ամեն մարդ: Նա ծնողներ է ունեցել և հիմա վերադառնում է իր ծնողների գիրկը: Նա երկար է ապրել աշխարհում և ի պատիվ իրեն՝ կարողացել է ազնիվ ապրել ու խղճով ապրել: Ու աշխատել է իր սիրած գործի մեջ, երեխաներ է դաստիարակել: Եվ հիմա, երբ հեռանում է աշխարհից, երկու պայծառ տղաներ է թողնում, որոնք պետք է պահեն նրա անունը ու շարունակեն ազգը: Տղաներ: Տղե՛րք: Ուրեմն Արգամ Թոռյանը ունեցել է սկիզբ և չունի վերջ:

Ահա թե ինչու եմ ասում՝ ճիշտ եք անում, որ լաց չեք լինում: Եթե այստեղ մեկը պետք է լաց լինի, դա ես եմ, ասացի:

ՄԱՐԳՈ – Այ տղա...

ՎԻՐԱԲ – Հա: Որովհետև չգիտեմ ովքեր են իմ ծնողները և նույնիսկ նրանց գերեզմանը չգիտեմ, որ մի օր գնամ ու պառկեմ նրանց կողքին: Եվ որովհետև չկա մեկը, որ իմ ստեղծած ազգը շարունակի: Իմ ազգը ինձ հետ էլ մեռնելու է, որովհետև ես տղա չունեմ: Ու ասացի՝ հարյուր անգամ կնոջս ասացի՝ Մարգո, բեր մի երեխա էլ ունենանք, սիրտս վկայում է, որ տղա է լինելու...

ՄԱՐԳՈ – Վա՞յ, վա՞յ...

ՎԻՐԱԲ – Կինս սկզբում՝ թե սովորում եմ, ինձ կխանգարի, հետո էլ, թե հիվանդ եմ, հետո էլ, թե մուրաբա եմ եփում... Ու հիմա ես տղա չունեմ: Ոչ հայր, ոչ տղա: Ահա թե ով պիտի լաց լինի:

ՄԱՐԳՈ – Լսիր, սիրտս կանգնում է: Ու էդ բոլորը դու այնտեղ ասացի՞ր, խայտառակ մարդ...

ՎԻՐԱԲ – Է՛, ուր էր, թե կարողանայի ասել: Էդ բոլորը ես մտքումս ասացի, Մարգո... Մտքումս...

(Անցումային երաժշտություն)

(Լավում է դռան գանգ)

ՊԱՐՍԱՄՅԱՆ – Ներս էկ, Վիրաբ: Ես դուռը քեզ համար էի բաց թողել: Մինչև բարձրանայի տեղից...

ՎԻՐԱԲ – Ի՞նչ է պատահել, ընկեր Պարսամյան:

ՊԱՐՍԱՄՅԱՆ – Չեմ հասկանում, ծնկներիս մեջ հանկարծ թուլություն զգացի:

ՎԻՐԱԲ – Բժիշկ կանչե՞մ:

ՊԱՐՍԱՄՅԱՆ – Ի սեր աստծո: Կգա ու նոր հիվանդություններ կգտնի: Հներն էլ ինձ բավական են:

ՎԻՐԱԲ – Բա ես ի՞նչ անեմ ձեզ համար:

ՊԱՐՍԱՄՅԱՆ – Հինա վեր եմ կենում: Հոգնեցի պատկերուց: Դու թեյ դիր գազոջախին... Քաղցած չե՞ս, Վիրաբ:

ՎԻՐԱԲ – Չէ, ինչ եք ասում:

ՊԱՐՍԱՄՅԱՆ – Իսկ փոքր ժամանակ ծնողներդ քեզ չե՞ն ասել, որ սուտ խոսել չի կարելի:

ՎԻՐԱԲ – Ես ծնողներ չեմ ունեցել:

ՊԱՐՍԱՄՅԱՆ – *(Վշտացած)* Ներիր, Վիրաբ, դե իհարկե, ես գիտեի... Ես հենց այնպես, խոսքի համար...

ՎԻՐԱԲ – Դուք ինձ ներեցեք, ընկեր Պարսամյան, չգիտեմ ինչու՝ անլուրջ պատասխանեցի: Հաշվի մի առեք, խնդրում եմ:

(Մպասքի չիկչիկոց)

ՊԱՐՍԱՄՅԱՆ – Իմ հարսիկը աշխարհի ամենաբարի արարածն է, Վիրաբ: Դու էլ գիտես, որ Աշոտս ու հարսս Կիրովականում են աշխատում: Բայց գալիս են ամեն կիրակի, հարսս մի ամսվա պաշար է լցնում սառնարանը, ամեն կաթսայի վրա գրած, թե ինչ է: Իմ բախտավորությունն է իմ հարսիկը:

ՎԻՐԱԲ – Տեսել եմ: Ու որպես գաղտնիք հայտնեմ, որ ինձ էլ խնդրել է հետևել ձեզ, որպեսզի ուտեք: „Եթե հայրիկը իմ պատրաստածները թափի, առաջինը դուք կնկատեք, Վիրաբ, -ասաց ինձ:

ՊԱՐՍԱՄՅԱՆ – Իսկ ես չեմ էլ իմացել, որ դավադրություն է հյուսվում իմ շուրջը: Լավ: Բայց եթե դու չուտես, ես էլ չեմ ուտի:

ՎԻՐԱԲ - *(Օրծադրում է)* Խոստովանում եմ, որ սուտ էի ասում: Քաղցած եմ:

ՊԱՐՍԱՄՅԱՆ – Ինչ վերաբերում է իմ պատրաստած թեյին, անձամբ Մարտիրոս Սարյանն է խմել ու բարձրացրել բույժ մատը: Եվ Բաղրամյանը:

ՎԻՐԱԲ – Հենց այստե՞ղ:

ՊԱՐՍԱՄՅԱՆ – Հենց այստեղ, հենց այստեղ: Մի ժամանակ, սիրելի Վիրաբ, այստեղ շատերն էին լինում: Իմ պաշտոնակիցներով, իմ աշակերտներով լցվում էր տունս: Չէին տեղավորվում, գիտե՞ս, մի մասը պատշգամբում էր հավաքվում: Հիմա՝ չէ, հիմա, ինչպես տեսնում ես, բավականին հանգիստ եմ ապրում, բարեկամս:

ՎԻՐԱԲ – Ինչ թունդ թեյ է, բա ձեզ կարելի՞ է:

ՊԱՐՍԱՄՅԱՆ – Ինձ արդեն ամեն ինչ էլ կարելի է:

ՎԻՐԱԲ – Ձեզ մի բան հարցնեմ. էսքան տարի ձեր տուն եմ գալիս, բայց անընդհատ տանջվում եմ, չգիտեմ ձեզ ինչպես դիմել: Կներեք, էլի, ընկեր Պարսամյան եմ ասում, բայց ես ձեզ ի՞նչ ընկեր, անուն հայրանունով էլ գիտեմ, որ չեք սիրում: Բա մենք վրացիների նման մի «բատոն» բառ չունե՞նք, որ հարգանքով դիմենք... Որ նրանք իրար բատոն են ասում, քեֆս գալիս է:

ՊԱՐՍԱՄՅԱՆ – Ինչո՞ւ չունենք, Վիրաբ, պարոն բառն էլ ունենք, տյար բառն էլ ունենք, բայց չգիտես ինչու դրանք դուրս են մնացել գործածությունից: Ես քեզ հետ լիովին համաձայն եմ, բայց դա երևի պետական, պաշտոնական կարգով պետք է լուծվի, տերմինաբանական կոմիտեի որոշմամբ...

ՎԻՐԱԲ – Լավ կլիներ... Թե չէ մի մատ երեխան ձեր ուսուցչին ասում է՝ ընկեր Բաբայան... Չեղավ, էլի...

ՊԱՐՍԱՄՅԱՆ – Դու ճիշտ ես, Վիրաբ... Հիմա ի՞նչ ես ասում, նարդի գցե՞նք:

ՎԻՐԱԲ – Մեծ ուրախությամբ...

(Նարդու քարերի չխկչխկոց)

ՊԱՐՍԱՄՅԱՆ – Սուտ բան է, ինձանից ճապոնացի դուրս չի գա:

ՎԻՐԱԲ – Ճապոնացի՞...

ՊԱՐՍԱՄՅԱՆ – Ճապոնացիները դարեր ի վեր, սերնդից սերունդ, իրենց արյան հետ մի բացառիկ հատկություն են բերել ու պահպանել, Վիրաբ: Եթե հյուր ունի, ով էլ լինի այդ հյուրը, ճապոնացի տանտերը պարտավոր է ուրախ դեմքով դիմավորել նրան, զբաղեցնել ու զվարճացնել, եթե նույնիսկ քիչ առաջ հեռագիր է ստացել, որ

խորտակվել է իր ամբողջ կարողությունը հանդիսացող միակ նավը և ավելին՝ որ գոհվել է որդին: Ես փորձեցի, Վիրաբ, բայց ոչինչ չի ստացվում: Ես շատ տխուր եմ այսօր, բարեկամս:

ՎԻՐԱԲ – Հո... հո բան չի՞ պատահել ձեր...

ՊԱՐՍԱՄՅԱՆ – Չէ, չէ, փառք աստծո: Աստված մի արասցե: Ես դրան չէի դիմանա, եթե ճապոնացի լինեի անգամ:

Դու աշակերտներ ունե՞ս, Վիրաբ:

ՎԻՐԱԲ – Ե՞ս: Չէ, իմ գործի մեջ ի՞նչ աշակերտ:

ՊԱՐՍԱՄՅԱՆ – Ուրեմն դու կարող ես քեզ երջանիկ համարել: Իմ աշակերտն այսօր դավաճանեց ինձ:

ՎԻՐԱԲ – Ձե՞զ, դավաճանե՞լ:

ՊԱՐՍԱՄՅԱՆ – Այո: Եվ հաշվի առ: Ոչ պատերազմ է, ոչ աղետ, ոչ արհավիրքի տարիներ և ոչ էլ նույնիսկ լինել-չլինելու հարց է, որպեսզի ես գոնե կարողանամ որևէ արդարացում փնտրել: Ոչ: Խաղաղ կյանք է: Բայց դավաճանում են: Հիմա կբացատրեմ: Թեյ չե՞ս ուզում, Վիրաբ:

ՎԻՐԱԲ – Չէ, շնորհակալ եմ:

ՊԱՐՍԱՄՅԱՆ – Իսկ ես ուզում եմ: Ուրեմն մեկը զրպարտագիր է գրել իմ մասին:

ՎԻՐԱԲ – Ի՞նչ... Ձեզ մոտ էլ եղպիսի բաներ կա՞ն:

ՊԱՐՍԱՄՅԱՆ – Կան, կան: Դա մի մարդ է, որ ողջ կյանքում քիչ թե շատ լուրջ գիտական որևէ աշխատանք չի գրել: Բայց միշտ առաջինն է ելույթ ունեցել ժողովներում: Ինչի մասին էլ լինեն այդ ժողովները: Եվ ահա այդ մարդը, ոչ ավել, ոչ պակաս, ինձ մեղադրում է գիտական անազնվության մեջ: Ինձ: Եվ իր զրպարտագիրը տանում տալիս է մեր ինստիտուտի դիրեկտորին: Իմ աշակերտին: Եթե դու լինեիր այդ դիրեկտորի փոխարեն, ի՞նչ կանեիր, Վիրաբ:

ՎԻՐԱԲ – Ե՞ս: Ես պատահ-պատահ կանեի այդ գրածն ու կշարտեի նրա երեսին: Ու կասեի՝ ապուշ, կներեք, խնդրում եմ: Կասեի՝ ապուշ, ես հիանալի գիտեմ իմ ուսուցչին: Նա անազնիվ բան չի անի, գնա:

ՊԱՐՍԱՄՅԱՆ – Իսկ իմ աշակերտը, իմ սիրելի աշակերտը նպատակահարմար է գտնում հանձնաժողով կազմել, ստուգել փաստերը և զրպարտագիրը դնել քննարկման: Եվ պատկերացնո՞ւմ ես՝ այդ հանձնաժողովի անդամներն իմ աշակերտներն են: Եվ ահա

իմ աշակերտները պետք է հավաքվեն ու քննարկեն, թե արդյոք օրինավո՞ր մարդ է իրենց ծեր ուսուցիչը:

ՎԻՐԱԲ – Չեմ հասկանում:

ՊԱՐՍԱՄՅԱՆ – Ես էլ չեմ հասկանում: Եվ երևի այս տարի ասպիրանտներ չընդունեմ:

ՎԻՐԱԲ – Ինչո՞ւ:

ՊԱՐՍԱՄՅԱՆ – Որովհետև չգիտեմ ինչ սովորեցնել նրանց: Ոչ այն պատճառով որ ծեր եմ ու ցավում է սիրտս... *(Հեռախոսի զանգ: Վերցնում է լսափողը, լայն ժպտում է)* Փայլուն, հիանալի... Վիրաբի հետ նստած նարդի ենք չխկացնում, այո, ջանիկս, այո, սիրելիս, սառնարանը կամաց-կամաց դատարկում եմ:

ՎԻՐԱԲ – Հարսի՞կն է...

ՊԱՐՍԱՄՅԱՆ – Վիրաբը բարևում է: Կասեմ: Ընկեր ռեկտո՞րն ինչպես է: Ձեռքիցդ խո՞ւմ է լսափողը: Լավ եմ, տղա ջան: Չէ, իսկապես լավ եմ: Այս կիրակի կարող եմ նույնիսկ արձակուրդ տալ ձեզ: Արձակուրդ չե՞ս ուզում: Ես էլ չեմ ուզում, տղաս: Շատ եմ կարոտում: Հատկապես կորյուններիս: Քնա՞ծ են: Դե իհարկե, հանգիստ եղեք, հանգիստ... Ի՞նչ, լսում եմ, իմ ուրախություն, խմում եմ, իհարկե, խմում եմ... ճիշտ նշանակված ժամերին: Հարսիկն է: Դե բարի գիշեր, զավակներս, բարի գիշեր ձեզ: *(Լռություն)* Որտե՞ղ կանգ առանք:

ՎԻՐԱԲ – Որ իբր թե այս տարի աշակերտներ չեք վերցնելու:

ՊԱՐՍԱՄՅԱՆ – Իսկ ինչո՞ւ իբր: Գիտությունը, բարեկամ, ինչպես յուրաքանչյուր գործ, պահանջում է, որ իր նվիրյալը լինի մաքուր ու ազնիվ իր արհեստի մեջ: Այլապես արդյունքը աննպատակ ու անազնիվ կլինի: Իհարկե կարելի է ստորություն անել, կեղծել ու ձևացնել, թե, ասենք՝ երկրագունդը չի պտտվում արեգակի շուրջը: Բայց կեղծես թե չկեղծես՝ հո պտտվում է:

Իսկ ահա վերջերս նկատում եմ, որ իմ աշակերտներից ոմանք շատ հեշտությամբ են հաշտվում այն մտքի հետ, որ ասենք երկրագունդը այնքան էլ չի պտտվում արեգակի շուրջը: Համենայն դեպս նրանք սովորել են լռել, երբ նրանց կողքին որևէ պաշտոնատար անձ այդպես է ասում: Հանուն ինչի՞: Հանուն սանդուղքի մի աստիճանի և աշխատավարձի բարձրացման: Նրանք քաղցած են, որ ես կարողանամ ինչ-որ բանով արդարացնել նրանց: Ոչ: Հիմա քաղցած մարդ չկա: Եթե քաղցած էլ եմ, ապա դա ոգու քաղց է, հասկանո՞ւմ ես, բարեկամս: Ոգու քաղց: Եվ գիտե՞ս, որ սրանից ավելի քան ութսուն տարի առաջ այդ մասին զգուշացրել է Ավետիք Իսահակյանը: Իսահակյան կարդացե՞լ էս, Վիրաբ:

ՎԻՐԱԲ – Շատ բան անգիր գիտեմ: Պաշտում եմ:

ՊԱՐՍԱՄՅԱՆ – Ահա ուրեմն, քո և իմ պաշտելի բանաստեղծը դեռևս 1903 թվականին գրել է.

Ես ձեզ ասում եմ՝ կգա ոգու սով:

Հասկանո՞ւմ ես, ասում է դուք ճոխ սեղաններից քաղցած վեր կկենաք, որովհետև ձեզ կպաշարի, կտիրի ոգու սովը: Վախեցեք դրանից:

ՎԻՐԱԲ – Ես էն մարդու հերն եմ անիծել, որ ջղայնացրել է ձեզ: Ձեռքս ընկներ...

ՊԱՐՍԱՄՅԱՆ – Չափազանցնո՞ւմ եմ: Հավանաբար, հավանաբար, բարեկամս: Ուրախ ժամանակ նման բաներ հազվադեպ ես հիշում: Դու իրավացի ես: Բայց հիշես թե չհիշես, փաստը հո կա՞: Վիրաբ, ավելի պարզ ասեմ՝ առաջ, շատ առաջ, երբ մարդկությունը նոր-նոր սկսել էր ձևավորվել և դրանից էլ հետո՝ բնակավայրերում և բնակավայրերից էլ շատ հեռու, բլուրների ու սարերի գագաթներին, ամենաբարձր, ամենաերևացող տեղերում մարդիկ ի՞նչ էին կառուցում տառապանքով ու հավատով, ինչե՞ր էին բարձրացնում որպես պաշտամունքի վայրեր, Վիրաբ: Տաճարներ և եկեղեցիներ: Տաճարներ և եկեղեցիներ, բարեկամս: Իսկ հիմա՞: Հիմա ամբողջ աշխարհում, ես հո եղել եմ, Վիրաբ, ամբողջ աշխարհում ու տեսել եմ, այդ նույն վայրերում, բարձունքների վրա ի՞նչ շենքեր են կանգնած և ինչ կառույցներ են վեր էլնում՝ վառ ու բազմերանգ լույսերով ողողված: Ռեստորաններ, սիրելի եղբայր, ռեստորաններ...

Աչք ունեցողը պետք է որ տեսնի, ասված է մի հին գրքում:

Հիմա հասկանո՞ւմ ես, թե ես ինչն եմ դավաճանություն համարում, Վիրաբ: Այն, որ իմ աշակերտներից ոմանք լքում են տաճարի շինարարությունը և գնում են ռեստորանի շինարարության վրա աշխատելու: Եվ ես նրանց այլևս պետք չեմ: Որովհետև իմ սկզբունքներով խանգարում եմ նրանց: Իմ գիտությունը խանգարում է նրանց:

Քանի՞ ժամ է, որ մենք միասին ենք, Վիրաբ:

ՎԻՐԱԲ – Վա՞յ, համարյա երեք ժամ:

ՊԱՐՍԱՄՅԱՆ – Տեսնո՞ւմ ես: Երեք ժամվա ընթացքում իմ հեռախոսը գնդաց ընդամենը մի անգամ: Եվ այն էլ զանգում էին իմ զավակները: Իսկ առաջ, բարեկամս, որպեսզի կարողանամ աշխատել, ստիպված անջատում էի հեռախոսը: Սա քեզ ոչինչ չի՞ ասում, Վիրաբ:

(Անցումային երաժշտություն)

(Որոտի մեջ արձագանքելով հնչում է մոր և աղջկա երկխոսությունը)

ՄՈՒՄԱՆ – Գիտեմ, էլի, որ իմանա հայրս աղբ հավաքող է, չի ուզի: Աղբ հավաքողից ո՞վ աղջիկ կուզի, այ մամ, չի ուզի, էլի, չի ուզի:

ՄԱՐԳՈ – Բա ես ի՞նչ ասեմ, որ ամբողջ կյանքում եմ ամաչել...

(Արձագանքով հնչում է. ամաչե՛լ... ամաչե՛լ... ամաչե՛լ...)

ՎԻՐԱԲ – Հիմա ի՞նչ եմ անելու: Ո՞նց եմ ապրելու սրանից հետո: Ո՞նց եմ տուն դառնալու: Ինչպե՞ս եմ նայելու Մարգոյի և Սուսանի դեմքերին, աշխարհում իմ միակ հարազատների դեմքերին:

Չբռնե՞մ ու գնամ Յողիկի մոտ: Մարգոյի ինատու: Սուսանի ինատու: Հետո՞: Դու Յողիկին պետք ես միայն գիշերը և այն էլ միայն այն օրերին, երբ Անտոն Եգորիչը գործուղման մեջ է: Հետո՞: Կամ ընդհանրապես, ընդհանրապես կարո՞ղ ես մտնել այդ տունը: Չես կարող, իհարկե, չես կարող, որովհետև դու ուրիշ տեսակ մարդ ես:

Գուցե իրո՞ք սխալ եմ ապրել: Գուցե կարիք չկա՞ր ամբողջ կյանքս նվիրելու Մարգոյին ու Սուսանին: Տեսնում եմ, էլի, թե ուրիշներն ինչեր են անում: Գրպանում միշտ իրենց փողն ունեն: Երեք օրը մեկ վարսավիրանոց են գնում՝ իրենց վարսավիրի մոտ, լվանում են գլուխները ու մազերը սարքում ֆենով: Ռեստորան են գնում, ուտում ինչ ուզում են, իրենց սիրած նվազն են պատվիրում, պարում են ու «շաբաշ» են նետում նվագողներին: Եվ թուղթ են խաղում ամբողջ գիշեր: Եվ շատ հանգիստ օրինական սիրուհի են պահում: Շուկա են գնում նրանց համար, թանկարժեք նվերներ են առնում, ծովափ են տանում հետները, կահավորում նրանց տները, գունավոր հեռուստացույց են նվիրում, այդ առթիվ սեղան են բացում և նույնիսկ հրավիրում հարևաններին, որոնք գալիս են... Ու խմում են ազնվության կենացը, ընտանիքի սրբության կենացը, հայ ժողովրդի կենացը... Եվ աշխարհը շուտ չի գալիս: Ի՞նչ շուտ գալ, չի էլ թեքվում: Հա, հա, հասկացանք: Բայց ես ո՞նց կարող եմ այդպես ապրել: Իմը բանվորի հաց է: Ես իմ հացը դառը քրտինքով եմ դատում, էդ հացը ո՞նց շաբաշ տամ նվագողներին: Ես ի՞նչ եմ արել: Իմ մտքում միայն տունն էղել, իմ տունը: Մարգոն չի ունեցել, թող ունենա, շատ ունենա, ամեն ինչ ունենա: Սուսանը թող այնպես չապրի, ինչպես իր ծնողները, թող ետ չմնա ոչ մեկից: Նրա ուզած ամեն ինչը պետք է կատարվի, բա ի՞նչ:

Բա էլ ինչո՞ւ ես նվնվում, Վիրաբ, ինչո՞ւ ես նվնվում: Դու չե՞ս քեզ բերել ու հասցրել այս օրին: Դու չե՞ս խրվել ու մնացել քո հավաքած աղբի մեջ: Աղբի մեջ... Տեսնո՞ւմ ես, ամբողջ կյանքում պետք ես եղել նրանց, իսկ հիմա պետք չես: Ամաչում են քեզ համար, որ աղբ ես հավաքում: Ուզում են, որ փոխես գործը... որովհետև, գիտե՛ք, քո գործը կարող է թե դուր չգա ինչ-որ մի լակոտի:

Հա, բայց գործը շո՞ր է, որ ուզած ժամանակ փոխես: Կամ ինչո՞ւ փոխեմ: Մեկն ու մեկը պե՞տք է, որ մաքրի քաղաքը, հավաքի աղբը... Իսկ Մարգոն ու Սուսանն ասում են...

Եթե ես տղա ունենայի: Ա՛խ, եթե ես գոնե մի տղա ունենայի...

(Ամպրոպ: Որոտի, անձրևի ձայն)

Հարկավոր է մի բան անել: Բայց ի՞նչ, ի՞նչ: Գուցե գնամ ու խորհո՞ւրդ հարցնեմ ակադեմիկոս
Պարսամյանից: Բայց նա՞ ինչ կարող է ասել: Նա ի՞նչ կարող է անել, երբ ինքն էլ չգիտի,
թե ինչպես ապրի սրանից հետո և խորհրդի ու օգնության կարիք ունի:

Բա ի՞նչ անեմ: Ձևացնեմ, թե ոչինչ էլ չեմ լսել ու գնամ տո՞ւն:

Հետո՞: Իսկ հետո, հետո... հետո ո՞նց ես ապրելու, Վիրաբ...

(Ավարտի երաժշտություն)

1989թ.